

Ա.Ղամբարյան

**Թրաֆիքինգի գոհերի դատավարական
պաշտպանության հիմնախնդիրները
Հայաստանի Հանրապետությունում
(Մոդուլ 6)**

Երևան 2011

Երեմյան Ա., Թումասյան Դ., Ղամբարյան Ա., Պետրոսյան Տ. Հաստատանի Հանրապետությունում մարդու թրաֆիքինգի և շահագործման դեմ պայքարի իրավական հիմունքները (ձեռնարկ դասավանդողների համար): Երևան. «Աստղիկ» Հրատ., 2011, 340 էջ:

ISBN 978-92-9235-881-5

Սույն ձեռնարկը նախատեսված է իրավապահ մարմինների աշխատակիցների, ինչպես նաև աշխատանքային տեսուչների վերապատրաստման ընթացքում «Մարդու թրաֆիքինգի և շահագործման դեմ պայքարի իրավական հիմունքները» դասավանդողների համար: Այդ նպատակով դասավանդողներին ներկայացվում է դասավանդման ընդհանուր մեթոդաբանությունը և ըստ կոնկրետ մոդուլների՝ տրամադրվում են դասավանդման համար անհրաժեշտ նյութեր և դասավանդման մեթոդիկայի վերաբերյալ խորհուրդներ: Ձեռնարկը կարող է օգտակար լինել նաև ԲՈՒՀ-երում և այլ հաստատություններում ու կառույցներում մարդու թրաֆիքինգի և մարդու շահագործման դեմ պայքարի իրավական հիմնախնդիրների ուսումնասիրությանը զբաղվող անձանց համար:

Ձեռնարկը կազմելուն և հրատարակելուն աջակցել են Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ) և Աշխատանքի միջազգային կազմակերպության (ԱՄԿ) Երևանի գրասենյակները՝ ԵՄ ֆինանսավորմամբ: Հեղինակների խումբն իր երախտագիտությունն է հայտնում այս ձեռնարկի ստեղծմանն աջակցող կազմակերպություններին, ինչպես նաև ձեռնարկի խմբագիր, իրավագիտության թեկնածու Ա. Խորխոռունուն:

Ձեռնարկում ներկայացված տեսակետներն արտացոլում են հեղինակների մոտեցումները, որոնք կարող են չհամընկնել սույն ձեռնարկի հրատարակմանն աջակցող կազմակերպությունների տեսակետներին:

Բովանդակություն

1. Ներածական մաս

2. Դասախոսին տրամադրվող նյութեր

2.1. Թրաֆիքինգի զոհերի պաշտպանության հատուկ միջոցները

2.1.1. Պաշտոնական նախազգուշացում

2.1.2. Պաշտպանվող անձի ինքնությունը հաստատող տվյալները պաշտպանելը

2.1.3. Պաշտպանվող անձի անվտանգության ապահովման միջոցները

2.2. Թրաֆիքինգի զոհերի պաշտպանության դատավարական միջոցները

2.2.1. Տեսողական դիտարկումից դուրս ճանաչման ներկայացնելը

2.2.2. Կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ խափանման միջոց ընտրելը

2.2.3. Նախնական քննության տվյալների հրապարակման անթույլատրելիությունը

2.2.4. Վերահսկողության տեխնիկական միջոցներ օգտագործելը և հեռախոսային ու այլ հաղորդումները գաղտնալսելը

2.2.5. Դատաքննության ընթացքում պաշտպանվող անձին ամբաստանյալի բացակայությամբ հարցաքննելը

2.2.6. Դռնփակ դատական քննություն անցկացնելը

2.2.7. Միջնորդավորված առերեսում

2.3. Քրեական դատավարությանը մասնակցող անձանց պետական պաշտպանության միջոցների ձեռնարկման հիմքերը, պայմանները և կարգը

2.3.1. Պաշտպանության միջոցներ ձեռնարկելու հիմքերը

2.3.2. Պաշտպանության միջոցներ ձեռնարկելու
պայմանները

3. Խնդիրներ և դատավարության նմանակում

4. Սլաշդներ

1. Ներածական մաս

Ցուցադրեք «Թրաֆիքինգի գոհերի դատավարական պաշտպանության հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» սլայդը:

«Թրաֆիքինգի գոհերի դատավարական պաշտպանության հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» մոդուլի նպատակները՝

- ուսումնասիրել, պարզել, հասկանալ և ամրագրել գիտելիքները քրեական դատավարությանը մասնակցող անձանց պաշտպանության հիմնախնդիրների վերաբերյալ,

- ուսումնասիրել, պարզել, հասկանալ և ամրագրել գիտելիքները թրաֆիքինգի գոհերի պաշտպանության առանձնահատկությունների վերաբերյալ,

- գործնականում կիրառել ստացած գիտելիքներն ու հմտությունները:

Թրաֆիքինգի դեմ պայքարի ոլորտում միջազգային և ներպետական իրավական համակարգերում առանձնահատուկ կարևորություն է տրվում թրաֆիքինգի գոհերի պետական պաշտպանությանը: Այսպես, «Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի 12-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր կողմ պետք է պատշաճ ուշադրություն դարձնի գոհի անվտանգությանն ու պաշտպանությանը: Նույն Կոնվենցիայի 28-րդ հոդվածը սահմանում է, որ յուրաքանչյուր կողմ պետք է ձեռնարկի այնպիսի օրենսդրական և այլ միջոցներ, որոնք կապահովեն արդյունավետ եւ պատշաճ պաշտպանություն վրեժխնդրության կամ ահաբեկման սպառնալիքից, հատկապես քննության և դատական հետապնդման ժամանակ և դրանից հետո: Տուժած երեխայի համար պետք է ապահովվեն հատուկ պաշտպանության միջոցներ՝ ելնելով վերջինիս լավագույն շահերից: ՀՀ քր. դատ. օր-ի 12-րդ բաժնում նախատես-

ված են քրեական դատավարությանը մասնակցող անձանց պաշտպանության միջոցները:

2. Դասախոսին տրամադրվող նյութեր

2.1. Թրաֆիքինգի գոհերի պաշտպանության հատուկ միջոցները

Ցուցադրեք «Թրաֆիքինգի գոհերի դատավարական պաշտպանության հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» դիդակտիկ նյութի «Պաշտպանության հատուկ միջոցներ» վերնագրով սլայդները:

Ունկնդիրներին նախապես ներկայացրե՛ք, որ ՀՀ քր. դատ. օր-ի 98¹-րդ հոդվածով նախատեսվել են պաշտպանության հետևյալ միջոցները՝

1) անձին պաշտոնապես նախագրուշացնելը թե, ումից է սպասվում պաշտպանվող անձի նկատմամբ բռնության վտանգ կամ այլ հանցանքի կատարում,

2) պաշտպանվող անձի ինքնությունը հաստատող տվյալները պաշտպանելը,

3) պաշտպանվող անձի անձնական անվտանգությունն ապահովելը, բնակարանը և այլ գույքը պահպանելը,

4) պաշտպանվող անձին անհատական պաշտպանության միջոցներ տրամադրելը և վտանգի մասին հայտնելը,

5) վերահսկողության տեխնիկական միջոցներ օգտագործելը և հեռախոսային ու այլ հաղորդումները զաղտնալսելը,

6) պաշտպանվող անձի՝ քրեական վարույթն իրականացնող մարմին ներկայանալու անվտանգությունն ապահովելը,

7) կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ այնպիսի խափանման միջոց ընտրելը, որը կրացառի նրանց կողմից պաշտպանվող անձի հանդեպ բռնության կամ այլ հանցանքի կատարման հնարավորությունը,

8) պաշտպանվող անձին բնակության այլ վայր փոխադրելը,

9) պաշտպանվող անձի ինքնությունը հաստատող փաստաթղթերը փոխարինելը կամ արտաքինը փոխելը,

10) պաշտպանվող անձի աշխատանքի, ծառայության կամ ուսման վայրը փոխելը,

11) դատական նիստերի դահլիճից առանձին անձանց հեռացնելը կամ դռնփակ դատական քննություն անցկացնելը,

12) դատարանում պաշտպանվող անձին հարցաքննելը՝ առանց նրա ինքնության մասին տեղեկությունների հրապարակման:

Դասախոսության այս բաժնում քննարկեք ՀՀ քր. դատ. օր-ի 12-րդ գլխում նախատեսված պաշտպանության հետևյալ հատուկ միջոցները՝

- Պաշտոնական նախազգուշացումը:

- Պաշտպանվող անձի ինքնությունը հաստատող տվյալները պաշտպանելը:

- Պաշտպանվող անձի անվտանգության ապահովման միջոցները (պաշտպանվող անձի անձնական անվտանգությունն ապահովելը, բնակարանը և այլ գույքը պահպանելը, պաշտպանվող անձին բնակության այլ վայր փոխադրելը, պաշտպանվող անձի աշխատանքի, ծառայության կամ ուսման վայրը փոխելը, ինքնությունը հաստատող փաստաթղթերը փոխարինելը կամ արտաքինը փոխելը):

2.1.1. Պաշտոնական նախազգուշացում

ՀՀ քր. դատ. օր-ի 98² հոդվածի համաձայն՝ պաշտպանվող անձի կյանքին կամ առողջությանը սպառնացող վտանգի մասին վկայող փաստերի առկայության դեպքում, երբ այդ փաստերը բավարար չեն այն անձի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու համար, ումից սպասվում է բռնության կամ այլ հանցանքի կատարման վտանգ, քրեական վարույթն իրականացնող մարմինը նրան պաշտոնապես նախազգուշացնում է քրեական պատասխանատվության ենթարկելու հավանականության մասին: Նախազգուշացումը կատարվում է անձից ստորագրություն վերցնելով:

Ներկայացրեք, որ սույն պաշտպանության միջոցի նոր կարգավորմամբ լուծվում է երկու խնդիր՝

1. պաշտոնական նախազգուշացումը չի կարող ձեռնարկվել, եթե առկա են քրեական գործ հարուցելու բավարար հիմքեր, հետևաբար՝ պաշտոնական նախազգուշացման ձեռնարկումը չի կարող հակասել քրեական դատավարության հանրայնության սկզբունքին,

2. դատական քննության ընթացքում դատարանը նույնպես անմիջականորեն կարող է անձին նախազգուշացնել քրեական պատասխանատվության ենթարկելու հնարավորության մասին, ինչը, կարծում ենք, գործնական առումով առավել արդյունավետ է:

Հանրայնությունը, որպես սկզբունք, թեև ուղղակիորեն ձևակերպված չէ քր. դատ. օր-ի 2-րդ գլխում, սակայն այն դատավարագիտությունում ընդունված է որպես քրեական դատավարության սկզբունք և բխում է քր. դատ. օր-ի մի շարք դրույթներից: Այսպես, քր. դատ. օր-ի 27-րդ հոդվածի համաձայն՝ հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը պարտավոր են իրենց իրավասության սահմաններում քրեական գործ հարուցել հանցագործության հատկանիշներ հայտնաբերելու յուրաքանչյուր դեպքում, իսկ 175-րդ հոդվածի համաձայն՝ քրեական գործ հարուցելու՝ օրենսգրքով նախատեսված առիթների և հիմքերի առկայության դեպքում դատախազը, քննիչը, հետաքննության մարմինը, իրենց իրավասության շրջանակներում, պարտավոր են քրեական գործ հարուցել:

Հատուկ ընդգծեք, որ պաշտպանության միջոցի կիրառությունը չպետք է հակասի քրեական իրավունքում՝ պատասխանատվության անխուսափելիության և քրեական դատավարությունում՝ հանրայնության սկզբունքներին: ՀՀ քր. օր-ի 7-րդ հոդվածի համաձայն՝ հանցանք կատարած յուրաքանչյուր անձ ենթակա է ՀՀ քր. օր-ով նախատեսված պատժի կամ քրեաիրավական այլ ներգործության: Հանրայնությունն իրավապահ մարմիններից պահանջում է հանցագործության վերաբերյալ բավարար հիմքերի առկայության դեպքում հարու-

ցել քրեական գործ. բացառություն են կազմում քրեական օրենսգրքով նախատեսված հիմքերը և պայմանները, ինչպես նաև մասնավոր հետապնդման գործերը: Քննարկվող պաշտպանության միջոցը կարող է ձեռնարկվել միայն այն դեպքում, երբ գործադրված սպառնալիքում բացակայում են քրեական գործ հարուցելու հիմքերը: Հակառակ դեպքում, պաշտոնական նախազգուշացումը՝ որպես պաշտպանության միջոց, կհակասի հանրայնության և պատասխանատվության անխուսափելիության սկզբունքներին:

Սույն թեման ավարտելուց հետո ունկնդիրներին տրամադրեք խնդիր:

2.1.2. Պաշտպանվող անձի ինքնությունը հաստատող տվյալները պաշտպանելը

Սույն թեման ներկայացնելուց առաջ ունկնդիրներին նախապես տեղեկացրեք, որ քրեական դատավարությանը մասնակցող անձանց պաշտպանությունը, մասնավորապես պաշտպանվող անձի ինքնությունը հաստատող տվյալների պաշտպանությունը, քրեական գործերով կիրառվում է բացառիկ դեպքերում, դա ամենօրյա կիրառման ինստիտուտ չէ, քանի որ այս պաշտպանության միջոցի կիրառմամբ էականորեն սահմանափակվում են մեղադրյալի իրավունքները:

ՀՀ քր. դատ. օր-ի 98³-րդ հոդվածի համաձայն՝ պաշտպանվող անձի ինքնությունը հաստատող տվյալների պաշտպանությունն իրականացվում է՝

1) քրեական գործի նյութերում և այլ փաստաթղթերում կամ տեղեկություններ պարունակող կրիչներում, ինչպես նաև քննչական գործողությունների կամ դատական նիստերի արձանագրություններում անձի մասին տեղեկությունների սահմանափակումով՝ քրեական վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ քրեական գործում առկա արձանագրային տվյալներում պաշտպանվող անձի ազգանունը, անունը, հայրանունը կեղծանուններով փոխարինելու միջոցով:

2) պաշտպանվող անձի մասին տեղեկություններ տրամադրելու վրա ժամանակավոր արգելք դնելով:

«Անհատական տվյալների մասին» ՀՀ օրենքի¹ 3-րդ - հոդվածի համաձայն՝ անհատական տվյալը ֆիզիկական անձին վերաբերող փաստերի, դեպքերի, հանգամանքների մասին ցանկացած տվյալ է այնպիսի տեսքով, որը թույլ է տալիս կամ կարող է թույլ տալ նույնականացնել անհատի ինքնությունը: «Անձնական բնույթի տեղեկությունների մեքենայացված մշակման բնագավառում մասնավոր անձանց պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի² համաձայն՝ «անձնական բնույթի տեղեկություններ» եզրույթը նշանակում է նույնացված կամ նույնացման ենթակա ֆիզիկական անձի մասին ցանկացած տեղեկություն («տեղեկատվական սուբյեկտ»):

Ունկնդիրներին ներկայացրեք, որ «Պաշտպանվող անձի ինքնությունը հաստատող տվյալներ» հասկացությունը մեկնաբանելիս պետք է հաշվի առնել, որ հաճախ հարցաքննության ընթացքում անձը հաղորդում է այնպիսի խիստ գաղտնի բնույթի տեղեկություն, որը կարող է իմանալ միայն մեկ անձ: Նշված տեղեկությունները քննչական կամ այլ դատավարական գործողության արձանագրության մեջ նշելը հնարավորություն է տալիս նույնացնել պաշտպանվող անձին: Նման իրավիճակներից խուսափելու նպատակով, քննչական և դատական գործողությանը նախապատրաստվելիս, վարույթն իրականացնող մարմինը յուրաքանչյուր դեպքում պետք է պարզի, թե ցուցմունք տվող անձի (պաշտպանվող ան-

¹ Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր, 2002/49 (224), 14.11.02:

² Конвенция о защите частных лиц в отношении автоматизированной обработки данных личного характера. Страсбург, 28 января 1981 года. Ուժի մեջ է մտել 1985թ. հոկտեմբերի 1-ից: Հայաստանի Հանրապետությունը 2006 թ. ապրիլի 17 դրությամբ այն չի ստորագրել և չի վավերացրել:

ձի) հաղորդած որ տեղեկություններն են, որ հայտնի են միայն իրեն, որպեսզի որոշի՝ դրանք գործի համար արդյո՞ք ունեն վճռորոշ նշանակություն, և անհրաժե՞շտ է, արդյոք, դրանք ամրագրել արձանագրության մեջ: Թեև ՀՀ քր. դատ. օր-ի 98³-րդ հոդվածում նշվում է պաշտպանվող անձի անվան, ազգանվան և հայրանվան մասին, սակայն անձի ինքնությունը հաստատող տեղեկություն կարող են համարվել նաև բնակության հասցեի, աշխատանքի վայրի, կրթական հաստատության մասին տեղեկությունները, նրա նկարները, բացառապես իրեն հայտնի տեղեկությունները և այլն:

Պաշտպանվող անձի ինքնությունը հաստատող տվյալների պաշտպանության դեպքում էականորեն սահմանափակվում է մեղադրյալի պաշտպանության իրավունքը ոչ միայն այն պատճառով, որ չեն բացահայտվում պաշտպանվող անձի մասին տվյալները, այլ նաև կարող է զաղտնի պահվել պաշտպանվող անձի կողմից ներկայացված ապացույցների բովանդակությունը: Ուստի պաշտպանության այս միջոցի ընտրությունը պետք է կիրառվի բացառիկ դեպքերում, երբ պաշտպանվող անձի կյանքին, առողջությանը սպառնում է իրական վտանգ: Անթույլատրելի է ձեռնարկել այս պաշտպանության միջոցը՝ ելնելով տակտիկական նկատառումներից կամ, օրինակ՝ ոստիկանի ծառայողական գործունեության արդյունավետությունը սպառնալիքի տակ չղնելու շարժառիթով՝ ոստիկանի անձը բացահայտելու աննպատակահարմարությունից: Բարձր հանրային վտանգավորություն ներկայացնող հանցագործությունների քննության նկատմամբ հասարակության, ՁԼՄ-ների հետաքրքրությունը, գործի հասարակական հնչեղությունն ինքնին չեն կարող նշված պաշտպանության միջոցի ձեռնարկման հիմք լինել:

Օրենսդիրը, հաշվի առնելով քրեական դատավարությանը մասնակցող անձանց պաշտպանության միջոցների ձեռնարկման դեպքում մեղադրյալի իրավունքների սահմանափակման հանգամանքը, փորձել է հավասարակշռել մի կողմից՝ պաշտպանվող անձի և արդարադատության շահերը,

մյուս կողմից՝ մեղադրյալի պաշտպանության իրավունքը: ՀՀ քր. դատ. օր-ի 98³-րդ հոդվածի երրորդ մասի համաձայն՝ հիմնական վարույթից առանձնացված որոշմանը և դրան առնչվող նյութերին ծանոթանալը մատչելի է միայն դատարանին և քրեական հետապնդումն իրականացնող մարմնին, իսկ դատավարության մյուս մասնակիցները դրան կարող են ծանոթանալ միայն քրեական վարույթն իրականացնող մարմնի թույլտվությամբ, եթե դա անհրաժեշտ է կասկածյալի կամ մեղադրյալի պաշտպանությունն իրականացնելու կամ քրեական գործի քննության համար էական նշանակություն ունեցող որևէ հանգամանք պարզելու համար:

Ունկնդիրներին տեղեկացրեք, որ սույն նորմի կիրառման ժամանակ պետք է հաշվի առնել հետևյալ հանգամանքները:

1. Պաշտպանության կողմը հիմնական վարույթից առանձնացված նյութերին ծանոթանալու նպատակով, պետք է վարույթն իրականացնող մարմնին ներկայացնի միջնորդություն, որտեղ կհիմնավորվի մեղադրյալի կամ կասկածյալի իրավունքների իրականացման տեսանկյունից այդ նյութերին ծանոթանալու անհրաժեշտությունը:

2. Հիմնական վարույթից առանձնացված նյութերին, հետևաբար նաև պաշտպանվող անձի ինքնությունը հաստատող տվյալներին ծանոթանալու թույլտվություն տալիս է վարույթն իրականացնող մարմինը: Այդ մասին կայացվում է որոշում:

3. Վարույթն իրականացնող մարմինը միջնորդությունը բավարարելու հարցում ունի հայեցողություն, և ինքը պետք է գնահատի պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար այդ նյութերին ծանոթանալու անհրաժեշտությունը, ժամանակը և դրա հետևանքով պաշտպանվող անձին վնաս հասցնելու հավանականությունը:

4. Եթե գործի հանգամանքներից երևում է, որ պաշտպանվող անձի ներկայացրած ապացույցները կամ ցուցմունքները մեղադրյալի մեղավորության մասին վկայող միակ ապա-

ցույցն են, կամ այդ մեղադրանքը առավելապես հիմնված է այդ ապացույցների վրա, ապա վարույթն իրականացնող մարմինը պետք է թույլատրի մեղադրյալին՝ ծանոթանալու առանձնացված նյութերին:

5. Եթե մի կողմից՝ մեղադրանքը բացառապես կամ առավելապես հիմնված է պաշտպանվող անձի ապացույցների վրա, և մյուս կողմից՝ պաշտպանվող անձի մասին տվյալների սահմանափակման վերացման դեպքում անձի կյանքը կամ առողջությունը ենթարկվում է իրական սպառնալիքի³, ապա առաջարկվում է չբացահայտել պաշտպանվող անձի ինքնությունը հաստատող տվյալները և մինչդաստական վարույթում դադարեցնել քրեական հետապնդումը ՀՀ քր. դատ. օր-ի 35-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով, այն է՝ քրեական հետապնդումը ենթակա է դադարեցման՝ կատարված հանցագործությանը մեղադրյալի մասնակցությունն ապացուցված չլինելու արդյունքում, եթե սպառված են նոր ապացույցներ ձեռք բերելու բոլոր հնարավորությունները:

Ունկնդիրները պետք է գիտակցեն, որ պաշտպանվող անձի ինքնությունը հաստատող տվյալների սահմանափակման թույլատրելիության չափանիշները ամրագրված են Եվրոպական դատարանի նախատեսյալին իրավունքում, ուստի նրանք պետք է տեղյակ լինեն այդ որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումներին:

³ Տեսության մեջ նշվում է, որ պաշտպանվող անձանց ինքնությունը հաստատող տվյալների բացահայտման հարցը պետք է որոշի ոչ թե դատավորը, այլ վկան՝ տվյալների բացահայտման մասին գրավոր համաձայնություն տալով: Հակառակ դեպքում պաշտպանվող անձի մասին տվյալները որևէ դեպքում չեն կարող բացահայտվել: Տե՛ս Жариков Е. В., Дифференциация уголовного процесса как средство обеспечения безопасности лиц, содействующих уголовному судопроизводству: Автореф. дисс. ... канд. юрид. наук. - Барнаул. 2004. С. 17.

Եվրոպական դատարանի դիրքորոշման համաձայն՝ բոլոր ապացույցները պետք է ներկայացվեն հրապարակային դատական լսման ընթացքում, մեղադրյալի ներկայությամբ՝ մրցակցությունն ապահովելու նպատակով: Այս սկզբունքից կան բացառություններ, սակայն դրանք որևէ կերպ չեն կարող նսենացնել պաշտպանության իրավունքը: Արդարացի դատաքննության սկզբունքները պահանջում են նաև, որ համապատասխան դեպքերում պաշտպանական կողմի շահերը համադրվեն այն վկաների կամ գոհերի շահերի հետ, որոնք դատարան են կանչվել ցուցմունք տալու համար:

Այսպես, «Վիստերն ընդդեմ Նիդեռլանդների» գործով (14.02.2002թ.) դիմումատուն մեղավոր է ճանաչվել անօրինական ձերբակալություն իրականացնելուն հանցակցելու համար: Վերաքննիչ դատարանը իր որոշման մեջ մասնավորապես հենվել է անանուն վկայի ցուցմունքների վրա, ով նկարով ճանաչել է Վիստերին: Գերագույն դատարանը մեղադրական դատավճիռը բեկանել է այն հիմքով, որ չեն պահպանվել անանուն վկաների հաղորդումների օգտագործման պայմանները: Գերագույն դատարանը գործն ուղարկել է Վերաքննիչ դատարան և առաջարկել է քննիչ-դատավորին՝ լսել վկային: Քննիչ-դատավորը գտել է, որ վկայի ցանկությունը՝ մնալ չբացահայտված, հիմնավոր է, քանի որ այն պայմանավորված է դիմումատուի հանցակիցների կողմից հետապնդում իրականացնելու մտավախությամբ և այն հանգամանքով, որ մեղադրանքը կապված է եղել վրեժի ակտի հետ: Սրա հիման վրա քննիչ-դատավորը մեկուսացված շինությունում հարցաքննել է վկային և ներկայացրել է առանձին սենյակում գտնվող դիմումատուի պաշտպանի հարցերը: Վերաքննիչ դատարանը մեղավոր է ճանաչել դիմումատուին՝ հիմք ընդունելով քննիչ-դատավորի կողմից հարցաքննված անանուն վկայի ցուցմունքները, ինչպես նաև տարբեր հաշվետվություններ և այլ պաշտոնական փաստաթղթեր: Հետագայում Գերագույն դատարանը մերժել է իրավունքի հարցերի կապակցությամբ ներկայացված Վիստերի բողոքները՝ համաձայնելով քննիչ-դատավորի այն

եզրակացությանը, որ վկայի գաղտնիությունը եղել է հիմնավոր:

Եվրոպական դատարանը սույն գործով արձանագրել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ մասի «d» կետի խախտում հետևյալ հիմնավորմամբ. «Զննիչ-դատավորի հաշվետվությունը, որտեղ ըստ էության հիմք է ընդունվել մեղադրյալի հանցակիցների համբավը, չի նշվել, թե ինչպես է գնահատում վկայի մտավախության հիմնավորվածությունը ինչպես սկզբնական հարցաքննության, այնպես էլ երկար ժամանակ հետո քննիչ-դատավորի անցկացրած հարցաքննության ժամանակ: Ավելին, վերաքննիչ դատարանը չի ստուգել այն պատճառների լրջությունը և բավարար հիմնավորվածությունը, որոնց հիման վրա վկայի անձը չի բացահատվել: Բացի այս, դիմումատուի մեղավորությունն առավելապես ապացուցվել է անանուն վկայի կողմից ներկայացված ապացույցների հիման վրա»⁴:

«Դորսնն ընդդեմ Նիդեռլանդների» գործում Դատարանը եկել է հետևյալ եզրակացության. «Արդարացի դատաքննության սկզբունքները նաև պահանջում են, որ համապատասխան դեպքերում հավասարակշռություն ապահովվի պաշտպանության շահերի և ցուցմունք տալու համար կանչված վկաների կամ տուժողների շահերի միջև: Այս դեպքում, Ամստերդամում թմրանյութերի առուվաճառքի դեմ պայքարելու նպատակով ոստիկանները լուսանկարել էին մի շարք անձանց, որոնք կասկածվում էին թմրանյութ վաճառելու մեջ: Ոստիկանությունը տեղեկատվություն է ստանում, որ դիմողը զբաղվում է թմրանյութերի առուվաճառքով, և նրա լուսանկարը ցույց է տրվում մի շարք թմրամոլների, որոնք հայտարարում են, որ ճանաչում են նրան, և որ նա իրենց թմրանյութեր է վաճառել: Նրանցից ոմանք մնում են անանուն: Դիմողը ձերբա-

⁴ Путеводитель о прецедентной практике Европейского суда по правам человека за 2002 года. Науч. ред. – сост. Берестнев Ю.Ю., Виноградов М.В., пер. с англ. Власихин В.А., М.: 2004. С. 84.

կարվում է և դատապարտվում թմրանյութերի հետ կապված հանցագործությունների համար: Դիմողը գտնում է, որ իր նկատմամբ իրականացվող քննությունների ընթացքում որոշակի վկաների կողմից ապացույց ստանալը, լսելը և դրանց վրա հիմնվելը խախտել էր իր՝ պաշտպանության իրավունքը՝ հակասելով 6-րդ հոդվածին: Նա նշել է, որ առաջին ատյանի դատարանում տեղի ունեցած քննությունների ընթացքում երկու անանուն վկաներ քննիչ- դատավորի կողմից հարցաքննվել են իր պաշտպանի բացակայությամբ: Դատարանը նշել է, որ դատարանում անանուն վկաների օգտագործումը Կոնվենցիայի լույսի ներքո հարցեր է առաջացնում, և որ պետք է լինեն հավասարակշռող միջոցներ պաշտպանության իրավունքի ապահովման համար: Դատարանը նաև նշել է, որ վերաքննիչ դատարանում վկաները քննիչ-դատավորի կողմից հարցաքննվել են պաշտպանության կողմի փաստաբանի մասնակցությամբ, և քննիչ-դատավորը տեղյակ է եղել վկաների անձի ինքնությանը: Փաստաբանը հնարավորություն է ունեցել վկաներին տալու ցանկացած հարց, որը նա համարել է մեղադրյալի շահերից բխող, բացառությամբ այնպիսի հարցերի, որոնք կարող էին բացահայտել վկաների անձը, և այդ բոլոր հարցերին տրվել են պատասխաններ: Դատարանը նաև նշել է, որ ազգային դատարանը մեղավորության մասին իր հետևությունները չի հիմնավորել բացառապես կամ էական չափով անանուն վկաներից ստացված ապացույցներով, և այդ պատճառով Դատարանը Կոնվենցիայի 6-րդ հոդվածի խախտում չի արձանագրել»:

Չբացահայտված, անանուն աղբյուրից ստացված տեղեկատվությունը՝ որպես ապացույց օգտագործելու հարցի վերաբերյալ Եվրոպական դատարանի նախադեպային դիրքորոշումն արտահայտված է նաև «**Վան Մեխելենը և այլք ընդդեմ Նիդեռլանդների**» գործով: Ըստ գործի փաստական հանգամանքների՝ Նիդեռլանդների չորս քաղաքացիներից յուրաքանչյուրը 10 տարի ժամկետով ազատազրկման էր դատապարտվել ծանրացուցիչ հանցանքներում կատարված կո-

դոպուտի և սպանության փորձի համար: Դիմողներին ներկայացված մեղադրանքները, ի թիվս այլ սպացույցների, հիմնված էին ոստիկանների ցուցմունքների վրա, որոնց ինքնությունը չէր բացահայտվել գործի քննության ընթացքում, այդ թվում՝ դատաքննության ժամանակ: Որպես վկա ցուցմունք տված ոստիկանները չէին ցանկացել բացահայտել իրենց ինքնությունն այն պատճառաբանությամբ, որ իրենց անունները բացահայտելու դեպքում իրենք այլևս չեն կարողանա պատշաճ կերպով կատարել իրենց պարտականությունները: Բացի այդ, նրանք վախենում էին իրենց ընտանիքների անդամների նկատմամբ ճնշումների գործադրումից: Ըստ դիմողների՝ խախտվել էր արդարացի դատաքննության իրենց իրավունքը (Կոնվենցիայի 6-րդ հոդված), քանի որ իրենց մեղադրական դատավճիռը կայացվել էր հիմնականում այն ոստիկանների ցուցմունքների հիման վրա, որոնց ինքնությունը մնացել էր անհայտ, և որոնք չէին հարցաքննվել հրապարակային դատաքննության ժամանակ՝ ամբաստանյալների մասնակցությամբ:

Եվրոպական դատարանը սույն գործով նշել է. *«Մրցակցության սկզբունքը պահանջում է, որ բոլոր սպացույցները ներկայացվեն հրապարակային լսումների ընթացքում մեղադրյալի ներկայությամբ: Թեև կան որոշակի շեղումներ այդ սկզբունքից, այնուամենայնիվ, այդ շեղումները չպետք է սահմանափակեն պաշտպանության իրավունքները: Պատասխանող կառավարությունը չկարողացավ համոզիչ փաստարկներով պատճառաբանել մեղադրյալների իրավունքների նման ծայրահեղ սահմանափակման դիմելու անիրաժեշտությունը»:*

Սույն գործով Դատարանն անհրաժեշտ է համարել գնահատել ոստիկանության սպաներին և նրանց ընտանիքներին սպառնացող վրեժխնդրության վտանգի իրական լինելը: Ըստ դատարանի՝ կառավարության ներկայացրած ոչ մի փաստարկ չի վկայել իրական վտանգի առկայության մասին: Դատարանը հաշվի է առել նաև այն, որ դիմողի մեղավորությունը հաստատող միակ սպացույցը եղել են անանուն ոստի-

կանների ցուցմունքները: Սույն գործով ԵԳ-ն արտահայտել է նաև սկզբունքային նշանակություն ունեցող մեկ այլ իրավական դիրքորոշում: Որոշման 56-րդ կետում նշվում է. «Դատարանի կարծիքով՝ պաշտպանության կողմի շահերի հարաբերակցությունը վկաների գաղտնիության պահպանման օգտին ներկայցվող փաստարկների հետ առաջ է բերում նոր խնդիրներ, քանի որ վկաները, որոնց մասին խոսք է գնում, ծառայում են պետական ոստիկանությունում: Թեև նրանց և նրանց ընտանիքի շահերը նույնպես պաշտպանվում են Կոնվենցիայով, պետք է ընդունել, որ նրանց կարգավիճակը որոշակի առումով տարբերվում է շահագրգռված վկաների և զոհերի կարգավիճակից: Ոստիկանությունը ենթարկվում է պետության գործադիր իշխանությանը, և նրանք կապված են դատախազության հետ: Այս պատճառով ոստիկանի՝ որպես անանուն վկաներ հանդես գալու իրավունք պետք է տրվի միայն բացառիկ դեպքերում: Բացի այդ, նրանց ծառայողական պարտականությունների բնույթը, մասնավորապես՝ կալանքի իրականացումը, պահանջում է ցուցմունքներ տալ բաց դատական նիստում»:

Ելնելով նշված հանգամանքներից՝ դատարանը, նշված գործով ճանաչել է դիմողների արդարացի դատաքննության իրավունքի խախտման փաստը:

Ամփոփելով նախադեպային իրավունքի վերլուծությունը՝ կրկին ներկայացրե՛ք չբացահայտված, անանուն վկաներից ստացված տեղեկատվության՝ որպես ապացույց օգտագործելու թույլատրելիության վերաբերյալ Եվրոպական դատարանի հետևյալ սկզբունքները՝

1. Չբացահայտված, անանուն աղբյուրից ստացված տեղեկատվության օգտագործումն ինքնին չի հանդիսանում արդար դատաքննության իրավունքի խախտում, եթե միայն այն վճռորոշ դեր չի կատարել մեղադրական դատավճիռ կայացնելու համար: Մեղադրական դատավճիռը չպետք է հիմնվի միայն կամ առավելապես անանուն պնդումների վրա:

2. Եթե տվյալ ապացույցի աղբյուրը չբացահայտելու անհրաժեշտությունը պայմանավորված է վկայի կամ տուժողի

անվտանգության ապահովմամբ, ապա բացահայտվելու դեպքում վկային կամ տուժողին սպառնացող վտանգը պետք է լինի իրական:

3. Պետք է տարբերակել գործով չշահագրգռված վկաների և ծառայողական պարտականություններ կատարող վկայի անձի մասին տեղեկությունների գաղտնիության թույլատրելիության սահմանները: Ընդհանուր առմամբ, ոստիկաններն իրենց ծառայողական պարտականությունների ուժով պարտավոր են հրապարակային կերպով ցուցմունքներ տալ:

2.1.3. Պաշտպանվող անձի անվտանգության ապահովման միջոցները

ՀՀ քր. դատ. օր-ի 98¹-րդ հոդվածով նախատեսվել է պաշտպանվող անձի անվտանգության ապահովման հետևյալ միջոցները՝ պաշտպանվող անձի անձնական անվտանգությունն ապահովելը, բնակարանը և այլ գույքը պահպանելը, պաշտպանվող անձին բնակության այլ վայր փոխադրելը, պաշտպանվող անձի աշխատանքի, ծառայության կամ ուսման վայրը փոփոխելը, ինքնությունը հաստատող փաստաթղթերը փոխարինելը կամ արտաքինը փոխելը:

ՀՀ քր. դատ. օր-ի 98⁴-րդ հոդվածի համաձայն՝ քրեական վարույթն իրականացնող մարմինը, համագործակցելով այլ իրավասու մարմինների հետ, իրականացնում է պաշտպանվող անձի անձնական պահպանությունը, նրա բնակարանի կամ այլ գույքի պահպանությունը: Պաշտպանվող անձի բնակարանը կամ այլ գույքը սարքավորվում են հակահրդեհային կամ ազդանշանային տեխնիկական միջոցներով, փոխվում են նրա բնակարանի կամ անձնական այլ հեռախոսահամարները կամ նրան պատկանող տրանսպորտային միջոցի (միջոցների) պետական համարանիշները:

Պաշտպանվող անձին պատկանող կամ նրա կողմից օգտագործվող գույքը պահպանության տակ վերցնելիս ցանկալի է ստանալ պաշտպանվող անձի գրավոր համաձայնությունը: Բանն այն է, որ սույն պաշտպանության միջոցի ձեռնարկման դեպքում կարող են սահմանափակվել անձի ազա-

տությունը, մասնավոր կյանքը, նրա բնակարանի անձեռնմխելիությունը, սեփականության իրավունքի օգտագործման, տնօրինման և տիրապետման իրավագործությունները:

Անձնական պահպանության տակ վերցնելը չի ենթադրում պաշտպանվող անձի մեկուսացում իր միջավայրից, օրինակ՝ անթույլատրելի է անձին վերցնելով անձնական պահպանության տակ՝ արգելել հանդիպել իր ազգականներին, մտերիմներին, դուրս գալ բնակարանից, կատարել հեռախոսազանգեր և այլն:

Նշեք, որ թրաֆիքինգի վերաբերյալ քրեական գործերով պրակտիկան ցույց է տալիս, որ թրաֆիքինգի զոհերի վիճակի խոցելիությունը հաճախ պահանջում է որպես պաշտպանության միջոց կիրառել անձնական անվտանգության միջոց: Նման անհրաժեշտությունը հաճախ ծագում է տուժողներին դատարան ուղեկցելիս, երբ ամբաստանյալների մերձավորները փորձում են ներգործել զոհերի նկատմամբ:

2.2. Թրաֆիքինգի զոհերի պաշտպանության դատավարական միջոցները

Յուզադրեր «Թրաֆիքինգի զոհերի դատավարական պաշտպանության հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» դիդակտիկ նյութի «Պաշտպանության դատավարական միջոցները», «Դռնփակ դատարանություն» և «Միջնորդավորված առերեսում» վերնագրերով սյալոցները:

Պաշտպանության քրեադատավարական միջոցներ:

Ունկնդիրներին հիշեցրեք, որ քրեական դատավարությանը մասնակցող անձանց պաշտպանության միջոցները չեն սպառվում ՀՀ քր. դատ. օր-ի գլուխ 12 նախատեսված հատուկ պաշտպանության միջոցներով: Քր. դատ. օր-ում նախատեսված են մի շարք դատավարական բնույթի իրավական գործիքներ, որոնք նույնպես կոչված են պաշտպանելու քրեական դատավարությանը մասնակցող անձանց անվտանգությունը:

Ունկնդիրներին ներկայացրեք դատավարական բնույթի պաշտպանության հետևյալ միջոցները:

2.2.1. Տեսողական դիտարկումից դուրս ճանաչման ներկայացնելը

Տեսողական դիտարկումից դուրս ճանաչման ներկայացնելը կարող է իրականացվել հետևյալ ձևերով՝

1. ճանաչողը և ճանաչման ներկայացված անձը գտնվում են ընդհանուր միջնապատ ունեցող տարբեր սենյակներում, որտեղ առկա է հայելապատ ապակիով պատուհան: Ծանաչողը այդ պատուհանից կարող է տեսնել ճանաչման ներկայացված անձին, սակայն վերջինս գրկված է նման հնարավորությունից:

2. Ծանաչողը և ճանաչման ներկայացված անձը գտնվում են տարբեր սենյակներում: Սենյակներից մեկում, որտեղ գտնվում է ճանաչողը, տեղադրվում է տեսախցիկ, որը նկարահանում է ճանաչման ներկայացված անձանց:

3. Տեսության մեջ մտահոգություն է հայտնվում այն կապակցությամբ, որ տեսողական դիտարկումից դուրս անձին ճանաչման ներկայացնելու քննչական գործողություն կատարելու համար ՀՀ նախաքննության մարմինները համապատասխան շենքային պայմաններով դեռևս ապահովված չեն⁵: Նման դեպքերի համար առաջարկում ենք լուծումների հետևյալ տարբերակները: Տարբերակ առաջին՝ ճանաչողին և ճանաչման ներկայացված անձին տեղավորել միևնույն սենյակում այնպես, որ լուսային էֆեկտների օգնությամբ բացառվի ճանաչման ներկայացված անձի կողմից ճանաչողին տեսնելու հնարավորությունը: Տարբերակ երկրորդ՝ ճանաչման ներկայացնելը իրականացնել քննչական մեկուսարաններում, երբ ճանաչման ներկայացված անձը գտնվում է խցում, իսկ ճանաչողը, պաշտպանը, ընթերակաները և քննիչը գտնվում են դրսում: Ծանաչումն անցկացվում է մեկուսարանի դռան դիտանցքի օգնությամբ: Տեսողական դիտարկումից դուրս ճա-

⁵ Ալեքսանյան Մ., Նախնական քննություն, Երևան, 2002, էջ 138:

նաչման ներկայացնելու առաջարկվող տարբերակները լրացուցիչ պայմաններ և միջոցներ չեն պահանջում:

Դասավանդողը պետք է կարևորի, որ նշված քննչական գործողության արդյունքում ստացված ապացույցների հավաստիությունը և թույլատրելիությունն ապահովելու նպատակով անհրաժեշտ է պահպանել որոշ պայմաններ: Նախ՝ ճանաչման ներկայացված անձից որևէ դեպքում չպետք է գաղտնի պահել իրեն ճանաչման ներկայացնելու հանգամանքը: Քննչական գործողության արձանագրության մեջ պարտադիր պետք է նշվի տեսողական դիտարկումից դուրս ճանաչման ներկայացնելու մասին:

Ունկնդիրների քննարկմանը ներկայացրե՛ք հետևյալ հարցը՝ արդյո՞ք ճանաչման ներկայացված անձը և նրա պաշտպանը պետք է իմանան, թե ով է հանդես գալու որպես ճանաչող:

Կարծիքները լսելուց հետո նշեք, որ տեսության մեջ նշվում է, որ տվյալ անձինք չպետք է իմանան, թե ով է հանդես գալիս որպես ճանաչող, հակառակ դեպքում տեսողական դիտարկումից դուրս ճանաչման ներկայացնելը դառնում է անիմաստ⁶:

Որպես հարցի իրավական լուծում՝ ներկայացրեք, որ ՀՀ քր. դատ. օր-ի 98²-րդ հոդվածով թույլատրվեց վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ քրեական գործում առկա արձանագրային տվյալներում պաշտպանվող անձի ազգանունը, անունը, հայրանունը փոխարինել կեղծանուններով: Վարույթն իրականացնող մարմինը տեսողական դիտարկումից դուրս ճանաչման ներկայացնելիս պետք է ղեկավարվի նաև ՀՀ քր. դատ. օր-ի 98³-րդ հոդվածի պահանջներով և ճանաչման ներկայացնելու արձանագրությունում ճանաչողի անունը, ազգանունը, հայրանունը փոխարինի կեղծանուններով:

⁶ Преступления террористической направленности: уголовное преследование на досудебных стадиях. Под науч. ред. О.Н. Коршуновой.- СПб.: Изд. Юридический центр Пресс. 2003, С. 115.

Եթե ճանաչման ներկայացված անձի պաշտպանը կամ ներկայացուցիչը նախընտրել են գտնվել ճանաչողի սենյակում, ապա ճանաչողի ինքնությունը գաղտնի պահելու նպատակով կարող են օգտագործվել դիմակ, շպար, պաշտպանվող անձի ձայնը փոփոխող սարք:

2.2.2. Կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ խափանման միջոց ընտրելը

ՀՀ քր. դատ. օր-ի 135-րդ հոդվածի համաձայն՝ դատարանը, դատախազը, քննիչը կամ հետաքննության մարմինը խափանման միջոց կարող են կիրառել միայն այն դեպքում, երբ քրեական գործով ձեռք բերված նյութերը բավարար հիմք են տալիս ենթադրելու, որ կասկածյալը կամ մեղադրյալը կարող է խոչընդոտել մինչդատական վարույթում կամ դատարանում գործի քննությանը՝ քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու ճանապարհով:

Քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու ճանապարհով գործի քննությունը խոչընդոտելու հիմքով կիրառվող խափանման միջոցի տեսակն ընտրելիս, ՀՀ քր. դատ. օր-ի 135-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված հանգամանքների (վերագրվող արարքի բնույթը և վտանգավորության աստիճանը, կասկածյալի կամ մեղադրյալի անձը, տարիքը և առողջական վիճակը, սեռը, զբաղմունքի տեսակը, ընտանեկան դրությունը և խնամարկյալների առկայությունը, գույքային դրությունը, բնակության մշտական վայրի առկայությունը) հետ միասին պետք է հաշվի առնել դատավարությանը մասնակցող անձանց նկատմամբ ներգործության եղանակները, ներգործողի անձը, կապը կազմակերպված հանցավորության հետ և այլ հանգամանքներ:

Ունկնդիրների քննարկմանը ներկայացրե՛ք այն հարցը, թե՞ վարույթն իրականացնող մարմինը խափանման միջոց ընտրելու մասին որոշումը կամ խափանման միջոց ընտրելու

մասին դատարանին ուղղված միջնորդություն հարուցելու մասին որոշում կայացնելիս արդյոք պետք է հաշվի առնի նաև տուժողի կարծիքը:

Կարծիքները լսելուց հետո նշե՛ք, որ տեսության մեջ արտահայտվել է կարծիք, ըստ որի անհրաժեշտ է տուժողին հնարավորություն տալ մեղադրյալի նկատմամբ խափանման միջոց ընտրելու հարցի վերաբերյալ արտահայտել իր կարծիքը, տեղեկացնել տուժողին այն հանգամանքների մասին, որոնց պատճառով խափանման միջոց չի ընտրվել, ինչպես նաև տուժողին տեղեկացնել խափանման միջոցը փոխելու, պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու մասին, տուժողին իրավունք վերապահել բողոքարկելու մեղադրյալի նկատմամբ ընտրված խափանման միջոցը:

Եվրոպական միության խորհրդի 2001թ. մարտի 15-ի՝ քրեական դատավարությունում հանցագործության գոհերի դերի մասին հիմնարար որոշման 4-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ անդամ պետությունները պետք է ապահովեն, որ պետզի անհրաժեշտության դեպքում հանցագործության գոհերին ծանուցելու մասին որոշում կայացվի, եթե կալանքի տակ գտնվող անձին կալանքից ազատելիս հանցագործության գոհերին կարող է վտանգ սպառնալ:

Որպես իրավական լուծում կհանդիսանա այն, որ տուժողի կարծիքը, ՀՀ քր. դատ. օր-ի 135-րդ հոդվածի 3-րդ մասում նշվող հանգամանքների հետ միասին, որպես այլ էական հանգամանք, կարող է հիմք համարվել խափանման միջոցի տեսակ ընտրելու հարցը լուծելիս:

ՀՀ քր. դատ. օր-ի 288-րդ հոդվածի համաձայն՝ որպես խափանման միջոց կալանքն ընտրելու կամ չընտրելու, ինչպես նաև կալանքի տակ պահելու ժամկետը երկարեցնելու կամ երկարեցնելուց հրաժարվելու օրինականության և հիմնավորվածության դատական ստուգումը կատարվում է վերաքննիչ դատարանի կողմից: Դատարանը բացատրություններ տալու համար դատական նիստին կարող է կանչել հետաքննության մարմնի աշխատակցին կամ քննիչին, ինչպես նաև

տուժողին: Նիստի սկզբում նախագահող դատավորը հայտարարում է, թե ինչպիսի բողոք է քննվելու, ներկայացնում է դատարան ներկայացած անձանց և նրանց համար պարզաբանում է իրենց իրավունքները և պարտականությունները: Այնուհետև դիմողը, եթե նա մասնակցում է բողոքի քննությանը, հիմնավորում է բողոքը, որից հետո լսում են նիստին ներկա գտնվող այլ անձանց:

Ունկնդիրներին որպես եզրակացություն ներկայացրեք, որ ՀՀ քր. դատ. օր-ը տուժողին հնարավորություն է տալիս դատարանում նախնական կալանքը՝ որպես խափանման միջոց, ընտրելու հարցի վերաբերյալ արտահայտել իր կարծիքը, եթե դատարանը նրան կանչում է նիստին:

2.2.3. Նախնական քննության տվյալների հրապարակման անթույլատրելիությունը

ՀՀ քր. դատ. օր-ի 201-րդ հոդվածի համաձայն՝ նախնական քննության տվյալները ենթակա են հրապարակման միայն գործի վարույթն իրականացնող մարմնի թույլտվությամբ: Անհրաժեշտ դեպքերում քննիչը, հետաքննության մարմինը վկային, տուժողին, քաղաքացիական հայցվորին և քաղաքացիական պատասխանողին, նրանց ներկայացուցիչներին, մասնագետներին, փորձագետներին, թարգմանիչներին, ընթերականերին, պաշտպաններին և գործին մասնակցող այլ անձանց գրավոր նախազգուշացնում են նախնական քննության տվյալներն առանց թույլտվության չհրապարակելու պարտականության մասին: ՀՀ քր. օր-ի 342-րդ հոդվածը առանց դատախազի, քննիչի կամ հետաքննություն կատարող անձի թույլտվության՝ նախաքննության կամ հետաքննության տվյալները հրապարակելը դիտվում է որպես հանցագործություն:

Դասախոսության ընթացքում քննարկվող հարցի տեսանկյունից հատկապես կարևորեք փաստաբանների՝ նախնական քննության տվյալները չհրապարակելու պարտականությունը: Բանն այն է, որ փաստաբանները, քրեական դա-

տավարությանը մասնակցելով որպես մեղադրյալի կամ կասկածյալի պաշտպան կամ տուժողի ներկայացուցիչ, կարող են տիրապետել նախնական քննության այնպիսի տվյալների, որոնք հետաքրքրություն են ներկայացնում հանցավոր միջավայրի համար, օրինակ՝ վկաների կամ տուժողների բնակության, աշխատանքի վայրը, անձնագրի տվյալները: Այս առումով վարույթն իրականացնող մարմնին խորհուրդ է տրվում անխտիր բոլոր քրեական գործերով պաշտպաններից վերցնել ստորագրություն նախնական քննության տվյալները չհրապարակելու պարտականության մասին: Պաշտպանից նման ստորագրություն վերցնելը պետք է լինի նույնքան բնական «արարողություն», որքան պաշտպանությունն ստանձնելիս փաստաբանների միության կողմից տրված՝ իր փաստաբան լինելու հանգամանքը հաստատող փաստաթուղթ ներկայացնելը⁷:

Միևնույն ժամանակ պարզաբաներ, որ քրեական վարույթն իրականացնող մարմինը պետք է պաշտպանին զգուշացնի քրեական գործի նյութերի հրապարակման անթույլատրելիության մասին, բայց այդ արգելքը չի կարող տարածվել պաշտպանի և պաշտպանյալի հարաբերությունների վրա⁸: Եթե այս արգելքը չի տարածվում պաշտպանի և պաշտպանյալի հարաբերությունների վրա, ապա ըստ էության՝ նախաքննության գաղտնիությունը մասամբ վերանում է, որովհետև ՀՀ քր. դատ. օր-ի 201-րդ հոդվածը պաշտպանի կողքին պաշտպանյալին չի նշում նախաքննության տվյալները չհրապարակելու

⁷ Игнатьев М.Е., К вопросу о нейтрализации противодействия расследованию со стороны защитника. Адвокатская практика. 2001. № 1, С.25, Гармаев Ю.П., Незаконная деятельность адвокатов в уголовном судопроизводстве. Учебник. – М.: Изд. „Экзамен“, 2005, С.41.

⁸ Պուկասյան Հ., Պաշտպանի որոշ իրավունքների վերլուծությունը ըստ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի: Իրավագիտության հարցեր: գիտ. աշխ. միջբուհական ժողովածու, 2000, թիվ 1-2, էջ 71:

պարտականություն կրող սուբյեկտների շարքում, ինչը արդարացված է⁹:

2.2.4. Վերահսկողության տեխնիկական միջոցներ օգտագործելը և հեռախոսային ու այլ հաղորդումները գաղտնալսելը

Հեռախոսային խոսակցությունը լսելու արդյունքում ձեռք բերված փաստական տվյալները հանդիսանում են ինչպես հանցագործության կատարման, այնպես էլ արդարադատությանն աջակցող անձի նկատմամբ հետքերական ներգործության փաստը հիմնավորող ապացույց: Տեսության մեջ նշվում է, որ հեռախոսային խոսակցության լսումը բավարար միջոց է անձի անվտանգությունը ապահովելու և նրա նկատմամբ գործադրված սպառնալիքները ամրագրելու համար¹⁰: Իրավապահ մարմինների կողմից այս եղանակով ձեռք բերված տվյալների վերլուծությունը հնարավորություն է տալիս ժամանակին ձեռնարկել համարժեք պաշտպանության միջոցներ:

ՀՀ քր. դատ. օր-ի 98⁶-րդ հոդվածի համաձայն՝ քրեական վարույթն իրականացնող մարմինը պաշտպանվող անձի գրավոր դիմումի հիման վրա կամ նրա գրավոր համաձայնությամբ և սույն օրենսգրքով սահմանված կարգով իրականացնում է նրա հեռախոսային կամ այլ խոսակցությունների գաղտնալսում: Խոսակցությունների գաղտնալսման¹¹ ընթացքում կարող է կիրառվել ձայնագրառում: Սույն պաշտպանութ-

⁹ Ղազիբյան Գ., Քրեական դատավարության պատմական և արդի հիմնախնդիրները Հայաստանում: Եր. համալս. հարտ., Երևան 2001, էջ257:

¹⁰ Епихин А. Ю., Обеспечение безопасности личности в уголовном судопроизводстве СПб.: Изд. Юридический центр Пресс. 2004, С. 303,

¹¹ ՀՀ քր. դատ. օր-ի 98⁶-րդ հոդվածում օգտագործվում է «հեռախոսային խոսակցությունների գաղտնալսում» հասկացությունը, մինչդեռ ՀՀ քր. դատ. օր-ի 241-րդ և 284-րդ հոդվածներում օգտագործվում է «հեռախոսային խոսակցություններ լսել» հասկացությունը:

յան միջոցը կարող է ձեռնարկվել պաշտպանվող անձի գրավոր դիմումի կամ գրավոր համաձայնության հիման վրա՝ դատարանի որոշմամբ¹²:

Ունկնդիրներին հստակ ներկայացրե՛ք, որ ՀՀ քր. դատ. օր-ում սահմանված է հեռախոսային խոսակցությունները լսելու երկու իրավական ռեժիմ՝ որպես քննչական գործողություն (ՀՀ քր. դատ. օր-ի 241 հոդված) և որպես օպերատիվ-հետախուզական միջոցառում (ՀՀ քր. դատ. օր-ի 284 հոդված):

Այնուհետև քննարկման առարկա դարձրե՛ք այն հարցը, թե՞ հեռախոսային խոսակցությունը գաղտնալսելը՝ որպես քրեական դատավարությանը մասնակցող անձանց պաշտպանության միջոց, որ ռեժիմի շրջանակներում է իրականացվելու՝ քննչակա՞ն, թե՞ օպերատիվ-հետախուզական:

ՀՀ քր. դատ. օր-ի 241 հոդվածի համաձայն՝ եթե բավարար հիմքեր կան ենթադրելու, որ կասկածյալի, մեղադրյալի և հանցագործությունների մասին տեղեկություններ ունեցող այլ անձանց հեռախոսային կամ կապի այլ միջոցներով տարվող խոսակցություններում կարող են գործի համար նշանակություն ունեցող տեղեկություններ պարունակվել, դատարանի որոշմամբ թույլատրվում է տվյալ խոսակցությունների լսում և ձայնագրառում: Խոսակցությունների լսման և ձայնագրառման անհրաժեշտության մասին քննիչը կայացնում է դատարանին միջնորդություն հարուցելու մասին պատճառաբանված որոշում, որում նշվում են՝ քրեական գործը և հիմքերը, որոնցով պետք է կատարվի համապատասխան քննչական գործողությունը, այն անձանց ազգանունը, անունը, որոնց խոսակցությունները ենթակա են լսման, լսման ժամկետը, հիմնարկը, որին հանձնարարվում է խոսակցությունների լսման և ձայնագրառման տեխնիկական իրականացումը: Որոշումն ուղարկվում է դատարան: Խոսակցությունների լսման և ձայնագրառման համար դատավորի համաձայնության դեպքում որոշումը կա-

¹² ՀՀ Սահմանադրական դատարանի ՍԴ-Ո 926 որոշում:

տարման համար քննիչի կողմից ուղարկվում է համապատասխան հիմնարկ (քննչական գործողություն):

Հեռախոսային խոսակցությունները լսելը՝ որպես քննչական գործողություն, տարբերվում է համանուն օպերատիվ-հետախուզական միջոցառումից: Բանն այն է, որ որպես քննչական գործողություն՝ հեռախոսային խոսակցությունների լսումը կարող է իրականացվել բացառապես դատարանի որոշմամբ, իսկ որպես օպերատիվ-հետախուզական միջոցառում՝ նաև առանց դատարանի որոշման: Այսպես, ՀՀ քր. դատ. օր-ի 284-րդ հոդվածով նախատեսվում է առանց դատարանի նախնական որոշման հեռախոսային խոսակցությունը լսելու մեկ դեպք:

Երբ օպերատիվ-հետախուզական միջոցառման իրականացման հապաղումը կարող է հանգեցնել տեռորիստական ակտի կատարմանը, կամ հնարավոր են Հայաստանի Հանրապետության պետական, ռազմական կամ բնապահպանական անվտանգությանն սպառնացող իրադարձություններ կամ գործողություններ, օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմնի ղեկավարի որոշման հիման վրա թույլատրվում է նման միջոցառումների իրականացումը՝ 48 ժամվա ընթացքում այդ մասին ծանուցելով դատարանին՝ նրան ներկայացնելով օրենքով նախատեսված փաստաթղթերը: Այն դեպքերում, երբ դատարանը բավարար չի համարում օպերատիվ-հետախուզական միջոցառման իրականացման հիմքերը, դրա իրականացումն անմիջապես դադարեցվում է, իսկ դրա իրականացման արդյունքում ձեռք բերված տեղեկությունները և նյութերը ենթակա են անհապաղ ոչնչացման: Հակառակ դեպքում՝ դատարանը որոշում է կայացնում օպերատիվ-հետախուզական միջոցառման իրականացումը թույլատրելու մասին:

2. Անձանց նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության իրավունքի սահմանափակում նախատեսող օպերատիվ-հետախուզական միջոցառումները, բացառությամբ

այն դեպքերի, երբ խոսակցության մասնակիցներից կամ հաղորդակցվողներից մեկը նախապես դրանք լսելու կամ վերահսկելու համաձայնություն է տվել, կարող են իրականացվել միայն դատարանի որոշմամբ:

Որպես լուծման տարրերակ՝ նշեք, որ հեռախոսային խոսակցության գաղտնալուծումը (քրեական դատավարությանը մասնակցող անձի պաշտպանության միջոց), պետք է իրականացվի որպես օպերատիվ-հետախուզական միջոցառում, քանի որ ՀՀ քր. դատ. օր.-ի 986 հոդվածը հեռախոսային խոսակցությունների գաղտնալուծումը կապում է պաշտպանվող անձի գրավոր դիմումի կամ նրա գրավոր համաձայնության հետ: Իսկ խոսակցության մասնակիցներից կամ հաղորդակցվողներից մեկի՝ նախապես դրանք լսելու կամ վերահսկելու համաձայնության ստանալու կարգ սահմանված է միայն ՀՀ քր. դատ. օր.-ի 284 հոդվածով (օպերատիվ-հետախուզական միջոցառում), մինչդեռ քննչական գործողության համար անձի համաձայնությունը չի պահանջվում:

2.2.5. Դատաքննության ընթացքում պաշտպանվող անձին ամբաստանյալի բացակայությամբ հարցաքննելը

Տեսության մեջ անձին ամբաստանյալի բացակայությամբ հարցաքննելը դիտվում է որպես քրեական դատավարությանը մասնակցող անձանց պաշտպանության միջոց: ՀՀ քր. դատ. օր.-ի 336-րդ հոդվածի 9-րդ կետի համաձայն՝ բացառիկ դեպքերում, երբ դա անհրաժեշտ է գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման համար, դատարանի պատճառաբանված որոշմամբ ամբաստանյալը կարող է հարցաքննվել մյուս ամբաստանյալի բացակայությամբ: Դատական դահլիճ ամբաստանյալի վերադառնալուց հետո նրա համար ընթերցվում են դատական նիստի արձանագրության մեջ ընդգրկված, նրա բացակայությամբ հարցաքննված ամբաստանյալի ցուցմունքները, և նրան հնարավորություն է ընձեռվում անհրաժեշտ ցուցմունքներ և հարցեր տալ իր բացակայությամբ հարցաքննված ամբաստանյալին:

ՀՀ քր. դատ. օր-ի 341-րդ հոդվածի համաձայն՝ անչափահաս վկայի հարցաքննությունը, եթե դա անհրաժեշտ է գործի հանգամանքների լրիվ, բազմակողմանի և օբյեկտիվ հետազոտման համար, կողմերի միջնորդությամբ կամ դատարանի նախաձեռնությամբ կարող է կատարվել ամբաստանյալի բացակայությամբ: Դատական նիստի դահլիճ վերադառնալուց հետո ամբաստանյալի համար հրապարակվում են անչափահաս վկայի ցուցմունքները, նրան հնարավորություն է ընձեռվում տվյալ վկային տալ հարցեր և ցուցմունքներ՝ վկայի հաղորդած տվյալների վերաբերյալ:

Նշված նորմերից բխում է, որ դատաքննության ընթացքում ամբաստանյալի բացակայությամբ կարող են հարցաքննվել միայն մյուս ամբաստանյալը և անչափահաս վկաները, իսկ չափահաս վկայի կամ տուժողի հարցաքննությունը ամբաստանյալի բացակայության պայմաններում անթույլատրելի է:

Ունկնդիրներին ներկայացրե՛ք խնդրի քննարկում:

2.2.6. Դռնփակ դատական քննություն անցկացնելը

ՀՀ քր. դատ. օր-ի 25.05.06 թ. փոփոխություններով և լրացումներով դռնփակ դատական քննություն անցկացնելը դիտվում է քրեական դատավարությանը մասնակցող անձանց պաշտպանության միջոց: ՀՀ քր. դատ. օր-ի 98¹²-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պաշտպանվող անձի անվտանգությունն ապահովելու համար դատական նիստի նախագահողն անցկացնում է դռնփակ դատական քննություն, ինչի մասին կայացվում է պատճառաբանված որոշում:

ՀՀ քր. դատ. օր-ի 16-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քրեական գործերի դատական քննությունը բոլոր դատարաններում դռնբաց է, բացառությամբ սույն հոդվածի երկրորդ մասով նախատեսված դեպքերի: ՀՀ քր. դատ. օր-ի 16-րդ հոդվածի 2-րդ մասում սահմանվում են դռնփակ դատական քննություն անցկացնելու դեպքերը: Դատարանի նախաձեռնությամբ կամ դատավարության մասնակիցների միջնորդությամբ

յամբ բացառիկ դեպքերում, եթե դա չի վնասի արդարադատության իրականացմանը կամ չի հանգեցնի դատավարության հրապարակայնության սկզբունքի չարդարացված սահմանափակմանը, դատարանի որոշմամբ դռնփակ դատական քննություն կարող է անցկացվել քրեական դատավարությանը մասնակցող անձանց կամ նրանց մերձավոր ազգականների¹³ պաշտպանության անհրաժեշտության դեպքում:

Քրեական դատավարությանը մասնակցող անձանց պաշտպանության հիմքով դռնփակ դատական քննություն անցկացնելը թույլատրվում է բացառիկ դեպքերում, քանի որ հրապարակային արդարադատությունն իրավական արժեքային համակարգի կարևոր տարրերից է, այն ամրագրված է ՀՀ - Սահմանադրությամբ և Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիայով:

Դատարանը մինչև քրեական դատավարությանը մասնակցող անձանց պաշտպանության հիմքով դռնփակ դատական քննություն անցկացնելու մասին որոշում կայացնելը պետք է քննարկի, թե արդյոք այլ եղանակներով հնարավոր չէ ապահովել անձի անվտանգությունը: Մասնավորապես՝

1. ՀՀ քր. դատ. օր-ի 98¹²-րդ հոդվածի առաջին մասում նշվում է, որ պաշտպանվող անձի անվտանգության շահերից ելնելով՝ դատական նիստի նախագահողն իրավասու է առանձին անձանց հեռացնել դատական նիստերի դահլիճից:

2. ՀՀ քր. դատ. օր-ի 98¹³-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ անհրաժեշտության դեպքում դատական նիստի նախագահողը կարող է դատաքննության ընթացքում արգելել տեսաձայնային և այլ միջոցներով հարցաքննության տեսաձայնագրումը:

¹³ ՀՀ քր. դատ. օր-ի 16-րդ հոդվածում չի նշվում մերձավորների պաշտպանության հիմքով դռնփակ դատական քննություն անցկացնելու մասին:

Դռնփակ դատական քննություն անցկացնելու մասին որոշումը պետք է կայացվի այն դեպքում, երբ առանձին անձանց դատական նիստերի դահլիճից հեռացնելը, տեսաձայնային և այլ միջոցներով պաշտպանվող անձի հարցաքննության տեսաձայնագրումը արգելելը կամ այլ պաշտպանության միջոցները բավարար կամ արդյունավետ չեն անձի պաշտպանության համար:

Դռնփակ դատական քննություն անցկացնելու մասին դատարանի որոշումը կարող է կայացվել ամբողջ դատական քննության կամ դրա համապատասխան մասի վերաբերյալ: Դռնփակ դատական քննությունն անցկացվում է քրեական դատավարության նորմերի պահպանմամբ: Դատարանների դատավճիռները և այլ վերջնական որոշումները հայտարարվում են հրապարակայնորեն: Դռնփակ դատական քննություն անցկացնելու դեպքում դատարանի որոշման հիման վրա կարող են հրապարակայնորեն հայտարարվել դատավճռի կամ այլ վերջնական որոշման միայն ներածական և եզրափակիչ մասերը. չեն հրապարակում այն մասերը, որոնք հիմք են հանդիսացել դռնփակ դատական քննություն անցկացնելու համար:

Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի 10.07.2003 թ. «Լրատվամիջոցների կողմից քրեական դատավարության վերաբերյալ տեղեկատվություն հաղորդելու մասին» հանձնարարականում նշվում է. «Վկաների ինքնությունը չպետք է հրապարակայնացվի, բացառությամբ այն դեպքերի, երբ վկան նախապես տվել է իր համաձայնությունը, վկայի անձի հրապարակայնությունը հանրային կարևորություն ունի, կամ երբ վերջինս արդեն իսկ վկայություն է տվել հրապարակայնորեն: Վկաների անձը (ինքնությունը) երբեք չպետք է հրապարակայնացվի, եթե դա սպառնում է նրանց կյանքին կամ անվտանգությանը: Պատշաճ կարևորություն պետք է տրվի վկաների պաշտպանության ծրագրին՝ հատկապես կազմակերպված հանցավորության դեմ տարվող կամ ընտա-

նիքի ներսում կատարված հանցագործություններին առնչվող քրեական դատավարությունում»:

2.2.7. Միջնորդավորված առերեսում

ՀՀ գործող քր. դատ. օր-ը չի նախատեսում միջնորդավորված առերեսման ինստիտուտը: Սակայն գործնականում, եթե թրաֆիքինգի զոհերն անչափահասներ են, ովքեր ենթարկվել են սեռական շահագործման կամ սեռական ոտնձգությունների, ապա զոհերի պաշտպանության վերաբերյալ միջազգային չափանիշները պահանջում են անչափահաս զոհերին չենթարկել կրկնակի վիկտիմիզացիայի: Այսպես, Եվրոպական դատարանը **«Մ. Ն. ընդդեմ Շվեյցարիայի»** գործով (2002 թ. հուլիսի 2) նշել է. *«Չի կարելի պնդել, որ Կոնվենցիայի 6-րդ - հոդվածի 3-րդ կետի «d» ենթակետը պահանջում է, որ բոլոր ղեկավարում հարցերը տրվեն անմիջականորեն մեղադրյալի և պաշտպանի կողմից»:* Այս գործում արտահայտված իրավական դիրքորոշումը ճիշտ գնահատելու համար պետք է հաշվի առնել գործի հանգամանքներ: Այսպես, դիմողը անչափահաս Մ-ի դեմ սեռական հանցագործության մեղադրանքով դատապարտվել է 8 ամիս ազատազրկման: Սույն գործով մեղադրական դատավճռի հիմքում ընկած է եղել առավելապես Մ-ի ցուցմունքները և դրանց տեսա- և ձայնագրությունները:

Մ-ին իրենց տանը հարցաքննել է ոստիկանը: Դիմողի փաստաբանը համաձայնել է չմասնակցել հարցաքննությանը, քանի որ Մ-ի փաստաբանը նույնպես չէր կարող մասնակցել այդ գործողությանը: Սակայն դիմողի փաստաբանը նախօրոք ձևակերպել է իր հարցերը, որոնք ոստիկանի կողմից ներկայացվել են Մ-ին: Հետագայում փաստաբանը հարցաքննության ձայնագրությունների հիման վրա հաստատել է, որ հարցաքննության ընթացքում շոշափվել են այն հարցերը, որոնք ինքը կցանկանար ներկայացնել:

Մ-ն դատարանում ցուցմունք չի տվել: Դատական քննության ընթացքում վերարտադրվել են Մ-ի առաջին հարցաքննության ձայնագրությունները և արձանագրությունները:

Դիմողը դատաքննության ընթացքում չի միջնորդել, որպեսզի Մ-ն անձամբ մասնակցի դատավարությանը: Դատարանը նշել է, որ այս գործով կարելի է ընդունել դիմողի պնդումն այն մասին, որ նա ձեռնպահ է մնացել Մ-ին դատարան կանչելու և անձամբ նրան հարցաքննելու վերաբերյալ միջնորդություն ներկայացնելուց, քանի որ այդպիսի միջնորդությունը կմերժվեր: Միևնույն ժամանակ Եվրոպական դատարանը նշել է, որ ոստիկանության աշխատակցի հետ Մ-ի երկրորդ զրույցը տեղի է ունեցել դիմողի փաստաբանի միջնորդությամբ, ով համաձայնվել է չմասնակցել հարցաքննությանը և այդ կապակցությամբ առարկություն չի ունեցել: Նա չի միջնորդել, որպեսզի հարցաքննությունը հետաձգվի կամ էլ տեսագրվի, մինչդեռ պաշտպանը նման հնարավորություն ունեցել է: Ավելին, փաստաբանը հնարավորություն է ունեցել ոստիկանի միջոցով տուժողին տալ հարցերը և բավարարված է եղել հարցերի պատասխաններով: Մույն գործով Եվրոպական դատարանը Կոնվենցիայի 6-րդ հոդվածի խախտում չի արձանագրել¹⁴:

2.3. Քրեական դատավարությանը մասնակցող անձանց պետական պաշտպանության միջոցների ձեռնարկման հիմքերը, պայմանները և կարգը

Յուզադրերք «Թրաֆիքինգի գոհերի դատավարական պաշտպանության հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» ղիդակտիկ նյութի «Քրեական դատավարությանը մասնակցող անձանց պետական պաշտպանության միջոցների ձեռնարկման հիմքերը և պայմանները», «Քրեական դատավարությանը մասնակցող անձանց պետական պաշտպանության հատուկ միջոցների ձեռնարկման դատավարական կարգը», «Դատախազական հսկողությունը և դատական վե-

¹⁴ Путеводитель о прецедентной практике Европейского суда по правам человека за 2002 года. Науч. ред. – сост. Берестнев Ю.Ю., Виноградов М.В., пер. с англ. Власихин В.А., М.: 2004. С. 118.

րահսկողությունը պետական պաշտպանության հատուկ միջոցների ձեռնարկման նկատմամբ» վերնագրերով սլաղները:

2.3.1. Պաշտպանության միջոց ձեռնարկելու հիմքերը

Նախ ունկնդիրներին ներկայացրեք, որ քրեական դատավարությանը մասնակցող անձանց նկատմամբ պետական պաշտպանության միջոցների ձեռնարկման¹⁵ համար առանձնացվում է երկու հիմք՝

- պետական պաշտպանության միջոցների ձեռնարկման փաստական հիմք,

- պետական պաշտպանության միջոցների ձեռնարկման դատավարական հիմք:

Պետական պաշտպանության միջոցների ձեռնարկման փաստական հիմքը: Պետական պաշտպանության միջոցների ձեռնարկման փաստական հիմք է հանդիսանում դատավարությանը մասնակցող անձանց նկատմամբ քրեական գործով վարույթին մասնակցելու կապակցությամբ բռնության կամ հակաիրավական ներգործության իրական սպառնալիքի կամ այլ վտանգի առկայությունը կամ դրանք իրականացնելու իրական հնարավորությունը:

Քննարկեք այն հարցը, թե պետական պաշտպանության միջոցների ձեռնարկման համար դատավարությանը մաս-

¹⁵ ՀՀ քր. դատ. օր-ի 98-րդ հոդվածի 3-րդ մասում օգտագործվում է «պաշտպանության միջոց ձեռնարկելու մասին որոշում» հասկացությունը, իսկ ՀՀ քր. դատ. օր-ի 293-րդ հոդվածի 2-րդ մասում՝ «դատավարության մասնակիցների նկատմամբ պաշտպանության միջոցներ կիրառելու մասին որոշում» հասկացությունը: Հաշվի առնելով հատկապես այն, որ նշված դրույթներում խոսք է գնում դատավարական որոշումների վերնագրերի մասին, առաջարկում ենք նշված նորմերը համապատասխանեցնել «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջներին, համաձայն որի՝ նորմատիվ իրավական ակտում միևնույն հասկացությունը սահմանելիս կամ միևնույն միտքն արտահայտելիս պետք է կիրառվեն միևնույն բառերը, եզրույթները կամ բառակապակցությունները՝ որոշակի հերթականությամբ:

նակցող անձանց նկատմամբ գործադրված ներգործությունը պետք է լինի հանցավոր, թե՞ պարզապես հակաիրավական: Ինչպես նշվեց, ներգործության մի շարք եղանակներ ոչ միայն հանցավոր չեն, այլ չեն հակասում օրենսդրությանը, սակայն հանցավոր տարրերի կողմից օգտագործվում են որպես դատավարությանը մասնակցող անձանց նկատմամբ ազդեցության բավականին արդյունավետ միջոց (օրինակ՝ կասկածելի անձը մշտապես հետևում է քրեական դատավարությանը աջակցող անձի երեխային): Նման դեպքերը նույնպես հանդիսանում են հատուկ պաշտպանության միջոց ձեռնարկելու հիմք: ՀՀ քր. դատ. օր-ի 25.05.06 թ. փոփոխությունների և լրացումներով պաշտպանության միջոցների ձեռնարկումը արդարացիորեն չի կապվում հանցավոր ոտնձգության հետ: Այսպես, ՀՀ քր. դատ. օր-ի 98-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քրեական դատավարությանը մասնակցող յուրաքանչյուր անձ, ով կարող է հաղորդել տվյալներ, որոնք նշանակություն ունեն հանցագործությունը բացահայտելու և դրա կատարողին հայտնաբերելու համար, ինչի հետևանքով կարող են *վտանգվել* նրա, նրա ընտանիքի անդամի, մերձավոր ազգականի կամ մերձավորի կյանքը, առողջությունը, գույքը, իրավունքներն ու օրինական շահերը, ունի պաշտպանության իրավունք: ՀՀ քր. դատ. օր-ի 98²-րդ հոդվածի 1-ին մասում նշվում է պաշտպանվող անձի կյանքին կամ առողջությանը սպառնացող *վտանգի* մասին, իսկ ՀՀ քր. դատ. օր-ի 99-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետում խոսվում է պաշտպանվող անձին սպառնացող *վտանգի* կամ հակաիրավական գործողությունների մասին քրեական վարույթ իրականացնող մարմնին տեղեկացնելու պարտականության մասին: Այս նորմերից բխում է, որ պաշտպանության միջոց կարող է ձեռնարկվել պաշտպանվող անձին սպառնացող վտանգի առկայության դեպքում:

Դատավարությանը մասնակցող անձանց սպառնացող վտանգի հանգամանքը կարող է հիմնված լինել օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացման ընթացում ձեռք բերված տվյալների վրա, մեղադրյալի նախկին դատվա-

ծության, մեղադրյալի կողմից նախկինում դատավարությանը մասնակցող անձանց նկատմամբ ներգործության մասին առկա փաստերի վրա և այլն¹⁶:

Ունկնդիրներին, որպես մոտեցում, նշե՛ք, որ պաշտպանության միջոցը կարող է ձեռնարկվել նաև այն դեպքում, երբ վարույթն իրականացնող մարմինը չի տիրապետում անձի նկատմամբ բռնություն կիրառելու սպառնալիքի վերաբերյալ փաստական տվյալների, սակայն անձի սահմանափակ կարգավիճակը կամ որոշակի խմբին պատկանելն արդեն իսկ անձին դնում են խոցելի վիճակում, ինչը հանդիսանում է վտանգի աղբյուր և պայմանավորում է պաշտպանության միջոցների ձեռնարկման անհրաժեշտությունը: Օրինակ՝ ձերբակալված, նախնական կալանքի տակ գտնվող անձինք, ազատագրկման և կալանքի ձևով պատիժ կրող դատապարտյալները, որոնք աջակցում են վարույթն իրականացնող մարմնին, իրենց կարգավիճակի ուժով առավել խոցելի են:

Պաշտպանության միջոց պետք է ձեռնարկվի նաև այն դեպքում, երբ մեղադրյալը կապված է հանցավոր խմբերի կամ կազմակերպված հանցավորության հետ: Վարույթն իրականացնող մարմինը պետք է նման իրավիճակները գնահատի ինքնին որպես վտանգ և այդ հիմքով ձեռնարկի անհրաժեշտ և արդյունավետ պաշտպանության միջոցներ:

Պետական պաշտպանության միջոցների ձեռնարկման դատավարական հիմքերը: Պետական պաշտպանության միջոցների ձեռնարկման դատավարական հիմքը վարույթն իրականացնող մարմնի որոշումն է պետական պաշտպանության միջոց ձեռնարկելու վերաբերյալ: ՀՀ քր. դատ. օր-ի 98¹-րդ հոդվածով նախատեսված պաշտպանության միջոցների ձեռնարկման դեպքում վարույթն իրականացնող մարմինը պետք է կայացնի պետական պաշտպանության միջոց ձեռնարկելու

¹⁶ Кравченко Р.Н., Каменев И.И., Безопасность участников уголовного процесса: проблема современности.
<http://www.buimvd.ru/fpk/biblio/w11.doc>

մասին առանձին դատավարական որոշում (ՀՀ քր. դատ. օր-ի 98-րդ հոդվածի 3-րդ մաս):

Դատավարական բնույթի պաշտպանության առանձին միջոցներ կիրառվելու մասին որոշումը կարող է արտացոլվել քննչական գործողության արձանագրությունում: Օրինակ՝ տեսողական դիտարկումից դուրս ճանաչման ներկայացնելու մասին վարույթն իրականացնող մարմնի որոշումն արտացոլվում է համապատասխան քննչական գործողության արձանագրությունում: Այն, որ վարույթն իրականացնող մարմնի առանձին որոշումներ կարող են արտացոլվել քննչական գործողության, դատական նիստի արձանագրություններում և այլ փաստաթղթերում, համապատասխանում է քրեական դատավարության գիտության դրույթներին¹⁷:

2.3.2. Պաշտպանության միջոցներ ձեռնարկելու պայմանները

Նշեք, որ պաշտպանության միջոցներ ձեռնարկելիս անհրաժեշտ է նկատի ունենալ հետևյալ պայմանները՝

1. անձի համաձայնությունը՝ համագործակցելու իրավապահ մարմինների հետ,

2. պաշտպանվող անձի տիրապետած տեղեկությունների կարևորությունը,

3. կատարվող կամ կատարված հանցագործության հանրային վտանգավորությունը:

¹⁷ Лупинская П. А., Законность и обоснованность решений в уголовном судопроизводстве. - М.: 1972, С. 5, Михайленко А.Р., Составление процессуальных актов по уголовным делам: Теория, методика, примерные образцы документов. Киев. 1989. С. 9, Якупов Р.Х., Правоприменение в уголовном процессе России.- М.: С. 156, Брусницын Л.В., Правовое обеспечение безопасности лиц, содействующих уголовному правосудию. - М.: Спарк, 1999, С. 88, Зайцев О. А., Государственная защита участников уголовного процесса.- М.: Экзамен. 2001, С. 40.

Պաշտպանության միջոցների ձեռնարկման և կատարման կազմակերպման անհրաժեշտ պայման է համարվում իրավապահ մարմինների հետ համագործակցելու վերաբերյալ պաշտպանվող անձի համաձայնությունը: Պաշտպանության միջոցների հարկադիր ձեռնարկումը չի հանգեցնում դրական արդյունքների: Իրավապահ մարմինների հետ համագործակցելու և իր նկատմամբ պաշտպանության միջոցներ ձեռնարկելու վերաբերյալ պաշտպանվող անձի կամավոր համաձայնության առկայության դեպքում է հնարավոր պաշտպանության միջոցների ամբողջական և բազմակողմանի իրականացումը:

Պաշտպանության միջոց ձեռնարկելու համար պաշտպանվող անձի համաձայնությունը պահանջվում է հետևյալ պաշտպանության միջոցների ընտրության դեպքում՝ վերահսկողության տեխնիկական միջոցների օգտագործումը և հեռախոսային կամ այլ հաղորդումները գաղտնալսելը (ՀՀ քր. դատ. օր-ի 98⁶-րդ հոդված), բնակության այլ վայր փոխադրելը (ՀՀ քր. դատ. օր-ի 98⁹-րդ հոդված), ինքնությունը հաստատող փաստաթղթերը փոխարինելը կամ պաշտպանվող անձի արտաքինը փոխելը (ՀՀ քր. դատ. օր-ի 98¹⁰-րդ հոդված), աշխատանքի, ծառայության կամ ուսման վայրը փոփոխելը (ՀՀ քր. դատ. օր-ի 98¹¹-րդ հոդված)

Պաշտպանվող անձը պետք է տիրապետի գործի քննության համար կարևոր և անհրաժեշտ տեղեկատվության, որը վերաբերում է ապացուցման ենթակա հանգամանքների: Որպես կարևոր տեղեկություն՝ պետք է համարվեն հանցավորի անձին կամ նրա գտնվելու վայրի մասին տեղեկությունները, հանցագործության դեպքի մասին տեղեկությունները, հանցագործին մերկացնող ապացույցները և այլն:

Պաշտպանության միջոցները կարող են ձեռնարկվել այն դեպքում, երբ անձը տիրապետում է հանցագործությանն առնչվող տեղեկությունների: ՀՀ քր. դատ. օր-ի 99-րդ հոդվածում նախատեսված պաշտպանության միջոցները չեն կարող ձեռնարկվել վարչական իրավախախտումների, կարգապա-

հական զանցանքների կամ քաղաքացիաիրավական խախտումների մասին տեղեկությունների տիրապետող անձի նկատմամբ:

Հատուկ պաշտպանության միջոցների ձեռնարկումն իրականացվում է երկու փուլով՝ առաջին պաշտպանության միջոց ձեռնարկելու մասին դատավարական որոշում կայացնելը, երկրորդ՝ պաշտպանության միջոցի իրականացումը:

ՀՀ քր. դատ. օր-ի 98-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ քրեական վարույթն իրականացնող մարմինը, հայտնաբերելով, որ անձը պաշտպանության կարիք ունի, այդ անձի գրավոր դիմումի հիման վրա կամ իր նախաձեռնությամբ որոշում է կայացնում պաշտպանության միջոցներ ձեռնարկելու մասին, որը ենթակա է անհապաղ կատարման: Պետական պաշտպանության միջոց ձեռնարկելու մասին դատավարական որոշում կայացնում է վարույթն իրականացնող մարմինը: Քրեական վարույթն իրականացնող մարմին է համարվում դատարանը, իսկ քրեական գործի մինչդատական վարույթում՝ հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը (քր. դատ. օր-ի 6-րդ հոդվածի 30-րդ կետ): ՀՀ քր. դատ. օր-ի 53-րդ հոդվածի համաձայն՝ դատախազը միջոցներ է ձեռնարկում տուժողի, վկայի և քրեական դատավարությանը մասնակցող այլ անձանց պաշտպանության համար:

Մի շարք դեպքերում նշված երկու փուլերը (պաշտպանության միջոց ձեռնարկելու մասին որոշում կայացնելը և այն կատարելը) իրականացվում են նույն սուբյեկտի կողմից: Օրինակ՝ քննիչը որոշում է ընդունում պաշտպանվող անձի ինքնությունը հաստատող տվյալները պաշտպանելու մասին և միաժամանակ իրականացնում է այդ որոշումը:

Թեև ՀՀ քր. դատ. օր-ի 98-րդ հոդվածի 2-րդ մասում նշվում է, որ քրեական դատավարությանը մասնակցող անձանց, ինչպես նաև նրանց ընտանիքի անդամի, մերձավոր ազգականի կամ մերձավորի պաշտպանությունն իրականացնում է վարույթն իրականացնող մարմինը, սակայն կարծում ենք՝ առանձին պաշտպանության միջոցներ կարող են իրականաց-

վել այլ սուբյեկտների կողմից, օրինակ՝ անձնական պահպանությունը: «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ ոստիկանությունը պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով միջոցներ ձեռնարկել դատավորների, դատախազների, քննիչների, դատական ակտերի հարկադիր կատարողների, ոստիկանության պաշտոնատար անձանց, տուժողների, վկաների, մեղադրյալների, պաշտպանների, դատավարության այլ մասնակիցների և դատավարությանն աջակցող անձանց, ինչպես նաև նրանց մերձավոր ազգականների կյանքը, առողջությունը և (կամ) գույքը պաշտպանելու ուղղությամբ:

Պետական պաշտպանության միջոցների արդյունավետության տեսանկյունից կարևորվում է համապատասխան պետական և տեղական ինքնակառավարման մարմինների համագործակցությունը: Այսպես, «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի համաձայն՝ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններն ու նրանց պաշտոնատար անձինք հնարավոր աջակցություն են ցույց տալիս ոստիկանությանը՝ իր խնդիրներն իրականացնելիս: Քաղաքացիները և իրավաբանական անձինք ոստիկանության խնդիրների իրականացմանը կարող են մասնակցել կամավորության սկզբունքով:

Պաշտպանության միջոցը ձեռնարկվում է ինչպես վարույթն իրականացնող մարմնի նախաձեռնությամբ, այնպես էլ պաշտպանության կարիք ունեցող անձի դիմումի հիման վրա¹⁸: Քրեական դատավարությանը մասնակցող անձի մեր-

¹⁸ Մինչև ՀՀ քր. դատ. օր-ի 25.05.06 թ. փոփոխությունները և լրացումները ՀՀ քր. դատ. օր-ի 98-րդ հոդվածի 1-ին մասում օգտագործվում էր «պաշտպանվելու կարիք ունեցող անձի *խնդրանք*» հասկացությունը, իսկ 2-րդ մասում նշվում էր պաշտպանության միջոցներ ձեռնարկելու մասին քրեական դատավարությանը մասնակցող անձի *պահանջի* մասին: «Պահանջ» և «խնդրանք» հասկացությունները տարբեր իմաստ ունեն: Այս

ձավորի նկատմամբ պաշտպանության միջոց ձեռնարկելու նպատակով քրեական վարույթ իրականացնող մարմնին գրավոր դիմում ներկայացնում է քրեական դատավարությանը մասնակցող անձը:

Պաշտպանության միջոցներ ձեռնարկելու մասին պաշտպանվող անձի¹⁹ դիմումը քրեական վարույթն իրականացնող մարմնի կողմից քննարկվում է անհապաղ, բայց ոչ ուշ, քան դա ստանալու պահից 24 ժամվա ընթացքում: Կայացված որոշման մասին անմիջապես հայտնվում է դիմողին, և նրան է ուղարկվում համապատասխան որոշման պատճենը:

Պաշտպանության միջոց ձեռնարկելու մասին դիմումը քննարկելիս վարույթն իրականացնող մարմինը պետք է հատուկ ուշադրություն դարձնի անձի նկատմամբ գործադրված ոտնձգության բնույթին: Եթե անձին սպառնացել են ֆիզիկական բռնությամբ կամ գույքը ոչնչացնելով կամ նրա նկատմամբ կիրառել են բռնի գործողություններ, ապա վարույթ իրականացնող մարմինը պարտավոր է ձեռնարկել պաշտպանության միջոցներ:

Պաշտպանության միջոցներ ձեռնարկելու դիմումի մերժումը արգելք չէ պաշտպանվող անձի կողմից այդպիսի միջոցներ ձեռնարկելու մասին նոր դիմում ներկայացնելու համար, եթե նա ենթարկվել է սպառնալիքի կամ հարձակման, կամ ի հայտ են եկել նախորդ դիմումում չնշված այլ հանգամանքներ:

Եթե պաշտպանության միջոց ձեռնարկելու մասին դիմումը պարունակում է հանցակազմի հատկանիշների մասին

առումով ընդունելի է փոփոխություններում «դիմում» հասկացության օգտագործումը:

¹⁹ ՀՀ քր. դատ. օր-ի 98-րդ հոդվածի 3-րդ, 4-րդ, 5-րդ և 6-րդ մասերում օգտագործվում է «պաշտպանվող անձ» հասկացությունը, մինչդեռ անձը ձեռք է բերում պաշտպանվող անձի կարգավիճակ, երբ որոշում է կայացվում նրա նկատմամբ պաշտպանության միջոց ձեռնարկելու մասին. մինչ այդ նա համարվում է պաշտպանության կարիք ունեցող անձ:

տեղեկություններ, ապա վարույթն իրականացնող մարմինն այդ դիմումը պետք է դիտի որպես հանցագործության մասին հաղորդում և պաշտպանության միջոց ձեռնարկելու մասին որոշման հետ մեկտեղ քննարկի քրեական գործ հարուցելու կամ քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշում կայացնելու հարցը:

Քրեական վարույթն իրականացնող մարմինը, որոշելով անձի նկատմամբ ձեռնարկել պաշտպանության միջոց, պարտավոր է պաշտպանվող անձին բացատրել նրա իրավունքները և պարտականությունները, ինչպես նաև աջակցել պաշտպանվող անձին՝ իրավունքների իրականացման և պարտականությունների կատարման գործում:

ՀՀ քր. դատ. օր-ի 99-րդ հոդվածի համաձայն՝ պաշտպանվող անձն իրավունք ունի՝

1) ներկայացնելու միջնորդություն պաշտպանության լրացուցիչ միջոցներ ձեռնարկելու կամ դրանք դադարեցնելու մասին,

2) իմանալու իր նկատմամբ իրականացվող պաշտպանության միջոցի կամ միջոցների, դրանց տեսակի, իրականացման, ժամկետի և դադարեցման մասին,

3) դատական կարգով բողոքարկելու քրեական վարույթն իրականացնող մարմնի, նրա պաշտոնատար անձի որոշումները, գործողությունները կամ անգործությունը,

4) հրաժարվելու պաշտպանության միջոցներից:

Պաշտպանվող անձը պարտավոր է՝

1) կատարել քրեական վարույթն իրականացնող մարմնի պաշտոնատար անձի օրինական պահանջները,

2) քրեական վարույթն իրականացնող մարմնին անհապաղ տեղյակ պահել իրեն սպառնացող վտանգի կամ հակաիրավական գործողության յուրաքանչյուր դեպքի, իր անձնական կյանքում և գործունեության մեջ տեղի ունեցած և պաշտպանվող անձի պաշտպանությանն առնչվող ցանկացած փոփոխության մասին,

3) խուսափել որևէ գործունեությունից, որը կարող է խոչընդոտել պաշտպանության միջոցի արդյունավետ կիրառումը,

4) պահպանել քրեական վարույթն իրականացնող մարմնի կողմից ժամանակավոր օգտագործման համար իրեն հանձնված գույքը և փաստաթղթերը:

2. ՀՀ քր. դատ. օր-ի 99¹-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պաշտպանության միջոցների իրականացման դադարեցումը կատարվում է քրեական վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ, որի պատճենը եռօրյա ժամկետում ուղարկվում է պաշտպանվող անձին, որը կարող է այն բողոքարկել դատական կարգով:

Պաշտպանության միջոցների իրականացումը կարող է դադարեցվել, եթե պաշտպանվող անձը՝

1) այդ մասին ներկայացրել է գրավոր դիմում,

2) տվել է կեղծ ցուցումներ, որը հաստատվել է օրինական ուժի մեջ մտած դատավճռով,

3) չի կատարել սույն օրենսգրքի 99-րդ հոդվածի 2-րդ - մասով նախատեսված պարտականությունները,

4) այլևս պաշտպանության կարիք չունի՝ իր կյանքին կամ անվտանգությանը սպառնացող իրական վտանգի վերացման պատճառով:

5) մահացել է:

Տեսության մեջ մոտեցում է արտահայտվել այն մասին, որ պաշտպանության միջոցների իրականացումը կարող են դադարեցվել միայն պաշտպանվող անձի համաձայնությամբ: Կարծում ենք՝ ցանկալի է, որ վարույթն իրականացնող մարմինը պաշտպանության միջոցների դադարեցման հարցը լուծելիս տեղեկանա պաշտպանության միջոցի իրականացումը դադարեցնելու վերաբերյալ պաշտպանվող անձի մոտեցմանը, սակայն այն չի կարող պարտադիր համարվել վարույթն իրականացնող մարմնի համար: Եթե պաշտպանվող անձը համաձայն չէ պաշտպանության միջոցների իրականացումը դադարեցնելու մասին որոշմանը, ապա այն կարող է բողոքարկել: Ի

դեպ, ինչպես նշվեց, ՀՀ քր. դատ. օր-ի 99-րդ հոդվածը երաշխավորում է պաշտպանվող անձի իրավունքը՝ իմանալու իր նկատմամբ իրականացվող պաշտպանության միջոցի դադարեցման մասին:

Պետական պաշտպանության միջոցներ ձեռնարկելու կամ այն դադարեցնելու մասին դատավարական որոշումը պետք է բավարարի դատավարական փաստաթղթերին ներկայացվող պահանջները. այն պետք է լինի օրինական, հիմնավորված և պատճառաբանված:

Լսարանում հատուկ քննարկման առարկա դարձրե՞ք պետական պաշտպանության միջոցների ձեռնարկման անանձնահատկությունները քրեական գործի հարուցման փուլում:

Հանցագործության մասին սկզբնական տեղեկությունները ձեռք են բերվում և ամրագրվում քրեական գործի հարուցման փուլում: Քրեական դատավարությանը մասնակցող անձանց պետական պաշտպանության դատավարական կառուցակարգերը պետք է գործողության մեջ դրվեն քրեական դատավարության սկզբնական՝ քրեական գործի հարուցման փուլում:

ՀՀ քր. դատ. օր-ը 176-րդ հոդվածի համաձայն՝ քրեական գործ հարուցելու առիթներն են՝ 1) հանցագործությունների մասին ֆիզիկական և իրավաբանական անձանց հաղորդումները՝ ուղղված հետաքննության մարմնին, քննիչին, դատախազին, 2) հանցագործությունների մասին լրատվության միջոցների հաղորդումները, 3) հետաքննության մարմնի, քննիչի, դատախազի, դատարանի, դատավորի կողմից հանցագործության մասին տվյալների, հանցագործության նյութական հետքերի և հետևանքների հայտնաբերումը՝ իրենց լիազորություններն իրականացնելիս:

Գործնականում նշված աղբյուրներից առավել տարածվածը հանցագործության մասին ֆիզիկական անձանց հաղորդումներն են: ՀՀ քր. դատ. օր-ի 177-րդ հոդվածի համաձայն՝ հանցագործությունների մասին ֆիզիկական անձանց հաղոր-

դումները կարող են լինել գրավոր կամ բանավոր: Հանցագործության մասին արված բանավոր հաղորդումը մտցվում է համապատասխանաբար՝ քննչական գործողության կամ դատական նիստի արձանագրության մեջ: Այլ դեպքերում կազմվում է առանձին արձանագրություն: Արձանագրության մեջ պետք է նշվեն դիմողի ազգանունը, անունը, ծննդյան թիվը, բնակարանի և ծառայողական հասցեն, նրա առնչությունը հանցագործությանը և իրազեկության աղբյուրը, ինչպես նաև տեղեկություններ նրա կողմից ներկայացված՝ անձը հաստատող փաստաթղթերի մասին: Եթե դիմողը չի ներկայացրել անձը հաստատող փաստաթղթեր, պետք է ձեռնարկվեն այլ միջոցառումներ՝ նրա անձի մասին տեղեկություններն ստուգելու համար: Արձանագրության մեջ նշված տվյալների նախատեսումը համարվում է պարտադիր, հակառակ դեպքում դրանք չեն կարող հանդիսանալ քրեական գործ հարուցելու առիթ:

Նշված նորմից ակնհայտ է, որ հանցագործության մասին հաղորդում ներկայացրած անձի մասին արձանագրության մեջ նշվող տեղեկությունները բավարար են հանցավոր միջավայրի տարրերի կողմից հաղորդում ներկայացրած անձին հայտնաբերելու և նրա վրա հակաիրավական ազդեցություն գործադրելու՝ արդարադատությանը հետագայում աջակցելուց հրաժարվելու նպատակով: Քրեական գործի հարուցման փուլում ձեռք են բերվում պաշտպանության կարիք ունեցող անձի ինքնությունը հաստատող տվյալներ: Եթե քրեական գործի հարուցման փուլում չձեռնարկվեն պաշտպանության միջոցներ, ապա հետագայում դրանց ձեռնարկումը կդառնա անիմաստ:

Այսպիսով, քրեական դատավարության հետագա փուլերում դատավարությանը մասնակցող անձանց պետական պաշտպանության իմաստավորման և արդյունավետության առումով անհրաժեշտ պայման է քրեական գործի հարուցման փուլում ձեռք բերված տվյալների հրապարակայնության սահմանափակումը: Անհրաժեշտ է քննարկել, թե արդյոք ՀՀ քր. դատ. օր-ը նախատեսում է քրեական գործի հարուցման փու-

լում ձեռք բերված տվյալների հրապարակման անթույլատրելիության մասին դրույթ:

ՀՀ քր. դատ. օր-ի 25-րդ գլուխը (Քրեական գործ հարուցելը) չի պարունակում որևէ դրույթ, որը դատավարությանը մասնակցող անձանց կարգելիք հրապարակելու քրեական գործի հարուցման փուլում ձեռք բերված տվյալները: ՀՀ քր. դատ. օր-ի 201-րդ հոդվածի 1-ին մասում արտացոլված դրույթը, որի համաձայն՝ նախնական քննության տվյալները ենթակա են հրապարակման միայն գործի վարույթն իրականացնող մարմնի թույլտվությամբ, չի կարող կիրառվել քրեական գործի հարուցման փուլում. այն վերաբերում է միայն նախնական քննության տվյալներին:

Քրեական գործի հարուցման փուլում ՀՀ քր. դատ. օր-ի 201-րդ հոդվածի պահանջները կիրառելը կարող է հնարավոր համարվել, եթե «հետաքննություն» հասկացությանը տրվի լայն մեկնաբանություն, այն է՝ հետաքննությունն ընդգրկում է նաև քրեական գործի հարուցման փուլը: Այսպես, առանձին տեսաբաններ, ելնելով քրեական դատավարության սուբյեկտների միջև մինչդատական փուլերում լիազորությունների տարանջատման գործառնությանի սկզբունքից, հետաքննությունը բնորոշում են որպես քրեական գործի հարուցման փուլում ընթացող, հանցագործության մասին հաղորդում ստանալու կամ դրա հատկանիշները հայտնաբերելու պահից սկսվող հանցագործության մասին տեղեկությունների հավաքմանն ուղղված գործունեություն, որը քրեական գործ հարուցելուց հետո հետաքննության կատարման համար օրենքով սահմանված ժամկետի շրջանակներում իրականացվող գործունեություն է՝ ուղղված հանցագործության հետքերի բացահայտմանը և դատավարական ամրագրմանը, հանցանքի կատարման մեջ կասկածվող անձի հայտնաբերմանը²⁰:

²⁰ Ղազինյան Գ., Քրեական դատավարության պատմական և արդի հիմնախնդիրները Հայաստանում: Եր. համալս. հրատ., Երևան, 2001, էջ232:

Կարծում ենք՝ հետաքննության նման ընկալումը չի բխում ներկայիս քրեական դատավարության փուլերի համակարգից: Այն, որ հետաքննությունը չի ընդգրկում քրեական գործի հարուցման փուլում կատարվող գործողությունները, կարելի է հիմնավորել նաև հետևյալ հանգամանքներով՝ ՀՀ քր. դատ. օր-ի 188-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հետաքննությունը կարող է լինել քննության սկզբնական փուլ՝ քրեական գործ հարուցելու պահից 10 օրվա ընթացքում: Այս դրույթից ակնհայտ բխում է, որ հետաքննությունը՝ որպես քննության սկզբնական փուլ, սկսվում է քրեական գործ հարուցելուց հետո: Բացի այդ, եթե հետաքննությունը ընդգրկում է նաև քրեական գործի հարուցման փուլը, ապա կստացվի, որ քննիչը, դատախազը, որոնք քրեական գործի հարուցման փուլում ունեն կոնկրետ լիազորություններ, իրականացնում են հետաքննություն: Մինչդեռ ՀՀ քր. դատ. օր-ը սահմանում է հետաքննության մարմինների համակարգը, իսկ դատախազությունը հետաքննության մարմին չէ:

Այսպիսով, ՀՀ քր. դատ. օր-ում անհրաժեշտ է նախատեսել քրեական գործի հարուցման փուլում ձեռք բերված տվյալների հրապարակման անթույլատրելիության մասին դրույթ: Ի դեպ, իրավաբանական գրականության մեջ նշվում է քրեական գործի հարուցման փուլում ստուգողական գործողությունների ընթացքում ձեռք բերված տվյալների հրապարակման անթույլատրելիության մասին, ինչը հիմնավորվում է ոչ միայն դատավարությանը մասնակցող անձի պաշտպանության տեսանկյունից, այլ նաև հետևյալ հանգամանքներով՝ «1. Նախնական ստուգման տվյալների հրապարակումը կարող է բարդացնել պաշտոնատար անձի՝ ճշմարտացի տեղեկություններ ձեռք բերելուն ուղղված գործողությունները, 2. տվյալների հրապարակումը կարող է արատավորել այն ան-

ծին, որի արարքի կապակցությամբ իրականացվում են ստուգողական գործողություններ»²¹:

Արդյոք ՀՀ քր. դատ. օր-ի 98¹-րդ հոդվածով նախատեսված պաշտպանության միջոցները կարող են ձեռնարկվել քրեական գործի հարուցման փուլում: Ընդհանուր առմամբ, կարծում ենք, հարցին պետք է պատասխանել դրական, քանի որ քրեական վարույթը սկսվում է քրեական գործի հարուցման նախապատրաստման պահից (ՀՀ քր. դատ. օր-ի 26 հոդվածի համաձայն՝ քրեական գործի վարույթը, այն է՝ քրեական գործի հարուցման նախապատրաստումը, հարուցումը, քրեական հետապնդումը, ինչպես նաև հարուցված գործի և իրականացվող քրեական հետապնդման հետ կապված բոլոր դատավարական գործողությունները և որոշումների ընդունումը կատարում են սույն օրենսգրքով սահմանված մարմինները և պաշտոնատար անձինք՝ իրենց վերապահված լիազորությունների շրջանակում): Այսինքն, քրեական գործի հարուցման փուլում վարույթն իրականացնող մարմինը կարող է ընդունել դատավարական որոշումներ, այդ թվում՝ պաշտպանության հատուկ միջոց ձեռնարկելու մասին:

Միևնույն ժամանակ, քրեական գործի հարուցման փուլի և պետական պաշտպանության հետ կապված որոշ հարաբերությունների իրավական կարգավորման թերի լինելու պատճառով այս փուլում պետական պաշտպանության միջոցներ ձեռնարկելիս կարող են առաջանալ որոշ խնդիրներ:

²¹ Шурухнов Н.Г., Обеспечение неразглашения данных предварительной проверки заявлений и сообщений о преступлениях. Уголовно-процессуальное принуждение и ответственность, их место в решении задач предварительного расследования. - Волгоград, 1987. С. 96, Москалькова Т.В., Уважение чести и достоинства личности как принцип советского уголовного процесса: Автореф. дисс. ... канд. юрид. наук. - М.: 1988. С. 9.

Ինչպես նշվեց, հանցագործության մասին հաղորդում ներկայացնելու կապակցությամբ կազմվում է արձանագրություն, որտեղ պարտադիր նշվում են հաղորդում ներկայացրած անձի անհատական տվյալները: Քրեական գործի հարուցման փուլում հանցագործության մասին հաղորդում ներկայացրած անձի պետական պաշտպանության գործուն միջոց է անձի ինքնությունը հաստատող տվյալների պաշտպանությունը: ՀՀ քր. դատ. օր-ի 98³-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պաշտպանվող անձի ինքնությունը հաստատող տվյալների պաշտպանությունն իրականացվում է քրեական գործի²² նյութերում և այլ փաստաթղթերում կամ տեղեկություններ պարունակող կրիչներում, ինչպես նաև քննչական գործողությունների կամ դատական նիստերի արձանագրություններում անձի մասին տեղեկությունների սահմանափակումով՝ քրեական վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ քրեական գործում առկա արձանագրային տվյալներում պաշտպանվող անձի ազգանունը, անունը, հայրանունը կեղծանուններով փոխարինելու միջոցով: Տեղեկությունները սահմանափակելու մասին քրեական վարույթն իրականացնող մարմնի որոշումը և դրան առնչվող նյութերն առանձնացվում են քրեական գործի նյութ նյութերից և պահվում վարույթն իրականացնող մարմնի մոտ:

Քրեական գործի հարուցման փուլում պաշտպանվող անձի ինքնությունը հաստատող տվյալների սահմանափակումը կարող է առաջացնել որոշ խնդիրներ:

²² «Քրեական գործ» հասկացությունը պետք է մեկնաբանել ՀՀ քր. դատ. օր-ի 6 հոդվածի 2-րդ կետում տրվող բնորոշմամբ. քրեական գործը քրեական հետապնդման մարմնի կամ դատարանի կողմից իրականացվող առանձին վարույթն է՝ քրեական օրենսգրքով արգելված մեկ կամ մի քանի ենթադրաբար կատարված արարքների կապակցությամբ: Բանն այն է, որ գերիշխում է այն մոտեցումը, որ մինչև քրեական գործ հարուցելը քրեական գործը բացակայում է: Մինչդեռ, «քրեական գործ» հասկացությունն ընկալվում է նաև իրավաբանական վարույթի իմաստով:

Արդյոք ՀՀ քր. դատ. օր-ի 98³-րդ հոդվածի հիման վրա, քրեական հետապնդման մարմինը կարող է հանցագործության մասին հաղորդում ներկայացրած անձի անունը, ազգանունը, հայրանունը փոխարինել կեղծանուններով:

ՀՀ քր. դատ. օր-ի 177-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ չստորագրված կամ կեղծ ստորագրությամբ կամ մտացածին անձի անունից գրված նամակը, հայտարարությունը կամ հանցագործության մասին այլ անանուն հաղորդում քրեական գործ հարուցելու առիթ չէ: Մույն նորմը նշանակում է, որ հանցագործության մասին հաղորդում ներկայացրած անձի ինքնությունը քրեական հետապնդման մարմնից գաղտնի պահելու դեպքում, չստորագրված կամ կեղծ ստորագրությամբ կամ մտացածին անձի անունից գրված նամակը, հայտարարությունը կամ հանցագործության մասին այլ անանուն հաղորդում չեն դիտում քրեական գործ հարուցելու առիթ: Մինչդեռ, քրեական գործի հարուցման փուլում ՀՀ քր. դատ. օր-ի 98³-րդ հոդվածը կիրառելիս՝ քրեական հետապնդման մարմինները տեղյակ են հանցագործության մասին հաղորդում ներկայացրած անձի մասին: Այս առումով, ՀՀ քր. դատ. օր-ի 177-րդ հոդվածի 7-րդ մասը չի բացառում ՀՀ քր. դատ. օր-ի 98³-րդ հոդվածի հիման վրա հանցագործության մասին հաղորդման մեջ կեղծանվան օգտագործումը: Վարույթն իրականացնող մարմինը նշված դեպքում կայացնում է անձի ինքնությունը հաստատող տվյալների պաշտպանության մասին որոշում, որում նշվում են հաղորդում ներկայացված անձի իրական տվյալները:

ՀՀ քր. դատ. օր-ի 182-րդ հոդվածի համաձայն՝ քրեական գործ հարուցելու առիթի և հիմքերի առկայության դեպքում դատախազը, քննիչը, հետաքննության մարմինը որոշում են կայացնում քրեական գործ հարուցելու մասին: Որոշման մեջ պետք է նշվեն գործ հարուցելու առիթն ու հիմքը, քրեական օրենքի այն հոդվածը, որի հատկանիշներով հարուցվում է գործը, հարուցելուց հետո՝ գործի հետագա ընթացքը:

Եթե քրեական գործ հարուցելու առիթը պաշտպանվող անձի ներկայացրած հաղորդումն է, որտեղ ՀՀ քր. դատ. օր-ի 98³-րդ հոդվածով սահմանված կարգով պաշտպանվել են հաղորդում ներկայացրած անձի ինքնությունը հաստատող տվյալները, ապա քրեական գործ հարուցելու մասին որոշման մեջ նույնպես կարող է օգտագործվել հաղորդում ներկայացրած անձի կեղծանունը: Միևնույն ժամանակ, քրեական գործ հարուցելու մասին որոշումը չի կարող առանձնացվել հիմնական վարույթից, քանի որ քրեական գործ հարուցելու մասին որոշումը նախնական քննություն սկսելու դատավարական հիմքերից է, որը պետք է մատչելի լինի դատավարությանը մասնակցող անձանց համար: Հատկապես անձի նկատմամբ քրեական գործ հարուցելու մասին որոշումը կարող է ուղղակի կամ անուղղակի կերպով շոշափել մարդու սահմանադրական իրավուքները և ազատությունները²³: Բացի այդ, նախնական քննության ժամկետները հաշվարկվում են քրեական գործ հարուցելու մասին որոշում կայացնելու օրվանից (ՀՀ քր. դատ. օր-ի 197-րդ հոդված): Նախնական քննության ավարտման պահը պետք է կանխատեսելի լինի նաև դատավարության այլ մասնակիցների, հատկապես պաշտպանության կողմի համար:

Տեսության մեջ առաջարկվում է նշված խնդրի լուծման մեկ այլ տարբերակ: Հանցագործության մասին հաղորդում ներկայացրած անձի անվտանգության ապահովման նպատակով կարող է փոխվել քրեական գործ հարուցելու առիթը²⁴: Հանցագործության մասին ֆիզիկական անձի հաղորդման փո-

²³ Ղամբարյան Ա., Քրեական գործ հարուցելու մասին որոշման դատական կարգով բողոքարկումը: Օրինականություն: 2006, թիվ 35, էջեր 33-41:

²⁴ Жариков Е. В., Обеспечение безопасности лиц, содействующих уголовному судопроизводству на стадии возбуждения уголовного дела. Пятьдесят лет кафедре уголовного процесса УрГЮА (СЮИ): Материалы Международ. науч. –практ. Конф., г. Екатеринбург, 27-28 янв. 2005г.: В 2 ч.- Екатеринбург, 2005. Ч. 1. С. 300-304.

խարեն կարող են օգտագործվել ՀՀ քր. դատ. օր-ով նախատեսված քրեական գործ հարուցելու այլ առիթներ:

3. Խնդիրներ և դատավարության նմանակում

Խնդիր 1. *30.10.09 թ. դատական նիստին ցուցմունք է տվել թրաֆիքինգի գոհ Լ. Ա-ի օրինական ներկայացուցիչ, գործով վկա Մ. Հ-ն, ով ցուցմունքներում նշել է, որ դայրոցում մնալու ընթացքում ականատես է եղել, թե ինչպես են դայրոցի ավագ դասարանի սաները ճնշում անչափահաս Ա. Ժ-ին, իսկ հետագայում իմացել է, որ դրա իրական պատճառը ամբաստանյալի կողմից Ա. Ժ-ին մուրացկանության մեջ ներգարվելն է և նրա նկատմամբ սեքսուալ բնույթի բռնի գործողություններ կատարելն է: Դատական նիստն ավարտվելուց հետո դատարանի շենքի մուտքի մոտ տուժող Ա. Ժ-ի օրինական ներկայացուցիչ Ս. Ժ-ն հարձակվել է Մ. Հ-ի վրա՝ ասելով. «Մատներովս կոկորդիցո խեղդելու եմ»:*

Հարց. *Դատավանդողն ունկնդրին առաջարկվում է՝ որպես մեղադրող՝ գնահատել իրավիճակը և ընտրել օրենքով նախատեսված համապատասխան պաշտպանության միջոց: Դատավանդողը ունկնդրին ժամանակ է տրամադրում ընտրված պաշտպանության միջոցի վերաբերյալ կազմել դատավարական փաստաթուղթ:*

Լուծում. *Դատավանդողը պետք է նկատի ունենա, որ նշված օրինակում թիվ 12130008 քրեական գործով մեղադրողը դատարանին միջնորդություն է ներկայացրել Մ. Հ-ի նկատմամբ պաշտպանության միջոց կիրառելու և Սյրբուհի Նորիկի Ժամկչյանին քրեական պատասխանատվության ենթարկելու հավանականության մասին նախազգուշացնելու վերաբերյալ, այն պատճառաբանությամբ, որ հաշվի առնելով նշվածը՝ մեղադրողը միջնորդել է ՀՀ քր. դատ. օր-ի 98-րդ և 98²-րդ հոդվածի կարգով որոշել Մ. Հ-ի նկատմամբ պաշտպա-*

նության միջոց կիրառելու հարցը և Մ. Ժ-ին նախազգուշացնել ձեռնպահ մնալ նման վարքագիծ դրսևորելուց: Դատարանը բավարարել է նշված միջնորդությունը, իսկ հետագա դատական նիստերին Մ. Ժ-ն ձեռնպահ է մնացել նման սպառնալիքներից:

Խնդիր 2. ՀՀ քրեական օրենսգրքի 132¹-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 6-րդ կետերի հատկանիշներով հարուցված քրեական գործով անչափահաս տուժողը գործի քննության ընթացքում մշտապես ենթարկվել է պաշտպանության կողմի ներգործությանը, նրան հարկադրել են փոխել ցուցմունքները: Դատարանի շենքում ամբաստանյալի մայրը և քույրերը, մոտենալով տուժողին, խնդրել են տուժողին փոխել ցուցմունքները, իրենց որդու դեմ ցուցմունք չտալ:

Հարց. Դասավանդողն ունկնդրին առաջարկում է՝ որպես մեղադրող՝ գնահատել իրավիճակը և ընտրել օրենքով նախատեսված համապատասխան պաշտպանության միջոց: Դասավանդողն ունկնդրին առաջարկում է ուշադրություն դարձնել ընտրված պաշտպանության միջոցի իրականացման իրավական մեխանիզմների առկայության հանգամանքի վրա:

Լուծում. Դասավանդողը ներկայացնում է, որ տուժողների անվտանգության ապահովման մեխանիզմները ՀՀ օրենսդրությամբ բացակայում են, և լսարանին առաջարկում է քննարկել այս բացը լրացնելու տարբերակները, ինչպես նաև հասարակական կազմակերպությունների հետ այս ոլորտում համագործակցության կարևորությունը: Նշված խնդրում ՀՀ ոստիկանությունը, հասարակական կազմակերպության խնդրանքով, տուժողի անվտանգության ապահովման համար տրամադրել է ոստիկանության աշխատակիցներ:

Դատավարության նմանակում

Դատախոսության ընթացքում անհրաժեշտ է ներկայացնել անչափահս տուժողի մասնակցությամբ քննվող գործ, որտեղ ունկնդիրներից մեկը որպես դատախազ (մեղադրող)՝

- քննիչին ցուցում է տալիս կիրառելու միջնորդավորված առերեսում: Ունկնդիրներից մյուսը վիճարկում է այս գործողության օրինականությունը:

- Դատաքննության ընթացքում միջնորդում է անչափահասին հարցաքննել ամբաստանյալի բացակայությամբ:

Նշված խնդիրների լուծումից հետո դատախոսը ունկնդիրների հետ քննարկում է այս պաշտպանության միջոցների կիրառման արդյունավետությունը և առաջարկում, որ ունկնդիրները ներկայացնեն այս ոլորտում օրենսդրության կատարելագործման վերաբերյալ առաջարկներ:

4. Սլայդներ

Թրաֆիքինգի զոհերի դատավարական պաշտպանության հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում:



Տպագրված է «ԱՍՈՂԻԿ» հրատարակչության տպարանում:
Ք. Երևան, Մայր-Նովա 24 (գրասենյակ)
Ավան, Դավիթ Մալյան 45 (տպարան)
Հեռ. (374 10) 54 49 82, 62 38 63
Էլ. փոստ՝ info@asoghik.am